

7926

11

Thru the year 1925
Steno. has been in charge
of the undersigned handwriting

9(47. 925)

9-83

Հ. ԶՈՐՅԱՆ

05 SEP 2011
19 AUG 2006

(47-925)

2-83

**ԱՐԱՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՔԱՂԱՔԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԻ ՄԻՋԵՎ ՍՏԵՂԾՎԱԾ
ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ**

(Արտատպություն Գիտության յեվ Արվեստի Ինստիտուտի
№ 2 յեվ 3 Տեղեկագրից)

ՅԵՐԵՎԱՆ

13 APR 2013

7926

25

ՀՀԲ. Ա. Կապուստյան
Ի. Բեկաթյան

25/12/28թ.
Յ. Բեկաթյան

**ԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԶԱՆՈՒՄ ՓԵՌԴԱԼԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԻ
ՅԵՎ ԳՅՈՒՂԻ ՄԻՋԵՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ**

(Ձեկուցված է Գիտություն և Արվեստի Ինստիտուտի պատմական-հասարակագիտական բաժնում 1927 թվի մարտի 26-ին և ապրիլի 9-ին)

Ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակադրությունը մի բարդ թեմա է: Լիովին ըմբռնում ենք այդ: Դրությունը ավելի բարդանում է, յերբ նկատի ենք առնում այն հանգամանքը, վոր ֆեոդալական Հայաստանի մեր վերջրած ժամանակաշրջանի մասին բոլորովին բացակայում են մոնոգրաֆիկ ուսումնասիրություններ և կարեւորը, վոր դեռ ևս այնցյալի քաղաքների ավերակները սպասում են իրենց պեղումներին: Այնուամենայնիվ, կարծում ենք, վոր մատենագրական աղբյուրներից (հայ թե ոտար) մեզ հասած վկայություններում կան բավականաչափ նյութեր, վորոնք հնարավորություն են տալիս մեզ յերևան հանելու այդ հակադրությունը:

Հայաստանի անցյալի հասարակական կյանքը լուսաբանելու տեսակետից մեր առաջադրած հարցի քննությունը հիմնաքարն է կազմում:

«Բոլոր զարգացած և ապրանքափոխանակությամբ պայմանավորված աշխատանքի բաժանման հիմքը կազմում է քաղաքի և գյուղի (Land) բաժանումը: Կարելի չէ ասել, վոր հասարակության ամբողջ տնտեսական պատմությունը անփոփոխվում է այս հակադրության շարժման մեջ»¹:

Մարքսը սրանով վոչ միայն քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակադրության շարժման մեջ է տեսնում հասարակության ամբողջ տնտեսական պատմությունը, այլ նա միաժամանակ մատնանիշ է անում սրա շուրջ կատարվելիք ուսումնասիրության մեթոդը:

Քաղաքի և գյուղի բաժանումը կապում է անմիջականորեն աշխատանքի բաժանման հետ: Մի բաժանում, վոր զարգացել և պայմանավորվել է ապրանքափոխանակությամբ: Ուրեմն, արտադրական ուժերի վորոշ զարգացման աստիճանում:

Այս տեսակետից մեր ուսումնասիրությունը յերկու հիմնական հարց պիտի շոշափի.

ա) Յերևան հանել այն շարժիչ ուժերը, վորոնք 7-րդ դարու կեսից ֆեոդալական Հայաստանի հասարակական աշխատանքում բաժանում են առաջացնում:

K. Marx. Das Kapital, Գլ. 12 IV, հջ 299, Stuttgart 1921:

1008
38643
7



բ) Յուշց տալ ստեղծված հակադրության այն հափը, վոր գոյութիւն է ունեցել արաբական շրջանի ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև:

Մեր կարծիքով, արաբական շրջանում, շարժիչ ուժեր հանդիսանում են. ա) բնահարկերի մեծագույն մասի դրամական ձևով գանձումը և բ) ֆեոդալական հողային սեփականութիւնների շուրջ առաջացած փոփոխութիւնները:

Սրանից առաջինը մեր կողմից առանձին ուսումնասիրության նյութ է դարձել և տպագրվել Պետ. Համալսարանի Գիտական Տեղեկագրի յերկրորդ համարում: Այդ ուսումնասիրության հիմնական յեղրակացութիւններից մին յեղել և քննարկելու համար հարկաւոր է արագորակաւ առաջացած բաժանումը:

Առաջագրված յերկրորդ հարցը պարզաբանելու համար մենք կանգ կառնենք խնդրո առարկա ժամանակաշրջանի քաղաքային կյանքի լուսաբանման վրա:

Այս կերպ մեր ուսումնասիրութիւնը բաժանվում է չորս հիմնական գլուխների.

I. Արաբական նվաճումի անդրադարձումը ֆեոդալական հողատիրութիւն և արաբներութիւնների վրա.

II. Քաղաքների բարգաւաճումը.

III. Արհեստավորական արտադրութիւնը ֆեոդ. Հայաստանի ապրանքափոխանակութիւն շրջանում.

IV. Առևտրական և վաշխառուական կապիտալ:

I. ԱՐԱԲԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄԸ ՖԵՈՂՈՒՍԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

Արաբների վարած հարկային քաղաքականութիւնը գուցէն թաց տարվում էր նաև, հետևողական կերպով, Հայաստանի հողատեր ֆեոդալների տկարացման քաղաքականութիւնը: Յեթե այդ քաղաքականութիւնը սրկզբնական շրջանում ընթանում էր արաբական պետութիւն համար նպաստավոր կերպով, ապա խալիֆատի տկարացման շրջանում մենք ականատես ենք լինում հողատիրական փոխարարութիւնների տեսակետից մի այնպիսի յերեւոյթի, վոր մի շարք տեսակետներից վերին աստիճանի ուշագրավ է:

Հայտնի յի, վոր արաբական տիրապետութիւնից հետո վերստին հանդիպում ենք ֆեոդալական Հայաստանում քաղաքների զարգացման: Ներքին տնտեսական կյանքում առաջացած այս փոփոխութիւնը ունի իր խոր պատճառները: Ուստի, նախ քան ֆեոդ. Հայաստանի քաղաքների մասին խոսելը, հարկավոր է յերկու հիմնական հարցի պատասխանել.

1. Արաբական նվաճումը ի՞նչ անդրադարձում ունեցավ ֆեոդ. Հայաստանի հողատիրական փոխարարութիւնների վրա.

2. Առաջացած հողատիրական այս նոր փոխարարութիւնները

ի՞նչ անդրադարձում ունեցան, իրենց հերթին, քաղաքների զարգացման վրա:

1. Ինչպես ամեն մի տիրողի նույնպես արաբների հիմնական նպատակն էր կազմում ֆեոդ. Հայաստանը տնտեսապես նվաճել: Այս տեսակետից խոշոր խոչընդոտ հանդիսանում էին բազմաթիվ մեծ ու փոքր հայ ֆեոդալները: Միապետական արաբ պետութիւնը չէր կարող յերեւք հանդուժել նման ֆեոդալների գոյութիւնը, մանավանդ յերբ նկատի ունենանք, վոր այդ ֆեոդալներից վոմանք արաբական և բյուզանդական աշխարհակալական պայքարների ընթացքում արաբական պետութիւն անհավատարմութիւն մի շարք փաստեր տվել էին:

Տեղական ֆեոդալների տնտեսական ապա և քաղաքական իշխանութիւնը տկարացնելու ասպարիզում, արաբների վարած քաղաքականութիւն մեջ մենք կարողանում ենք յերկու հիմնական գիծ մատնանշել:

ա. Վորոշ պատմական վկայութիւններ թույլ են տալիս մեզ ասելու, վոր արաբական պետութիւնը ձգտում ուներ տեղացի ֆեոդալները փոխարինելու արաբացիներով: Ոմարի (634—644 թ.) հին սկզբունքը, վորով արգելվում էր արաբացիներին դրաված յերկրներում հողային սեփականութիւններ ունենալ, վերանում էր Ումայի (644—656 թ.) ժամանակ: «Իսկական արաբները դարձան առաջին կարգի մեծ հողատերեր»:

Ուրեմն, արաբների նախ քան Հայաստանը վերջնականապես գրավելը (653/55 թ.) Ոմարի դրած որենքը վերացած է լինում:

Համաձայն Բալատուրիի վկայութիւն Հարիր բին Մաւլաման, Մուավիայի առաջարկով, Կարին փոխադրել և 2000 հոգուց բաղկացած մի պահակախումբ և նրանց շնորհել և ավատներ: Հավանաբար, սրանք այն հողերն էին, վորոնց սեփականատերերը գաղթել էին: Ըստ այդ վկայութիւն, այդ հողերը մշակվում էին տեղացիների կողմից, վորոնք կոչվում էին ajē և վճարում էին charaq կոչված տուրքը: 934 թ. փորձ է արվում բանակի մարդկանց հող տալ մշակելու. սակայն տալիս և բացասական արդիւնք և որենքը վերացվում է:

756 թվին Կարին տեղափոխված արաբացիների մասին Ղևոնդ պատմիչի մոտ կարդում ենք.

«... եւ կարգեաց (եզիտ վոստիկանը) ոոցա պատրաստութիւն կերակրոց յաշխարհէս հայոց»:

Այս մասին մի ուշագրավ վկայութիւն ունենք նաև սուրիացի պատմիչ Դընիի կողմից, վորը խոսելով 766/67 թվին սուրիացի գյուղացիութիւն վրա գործ դրված ճնշումների մասին, հայտնում է.

«... Նրանք (գյուղացիները) վոչինչ չունէին աշխատելու համար, վորովհետեւ նրանց հողերը արաբացիների կողմից ծախված էին»:

1 H. Topdschian. Die innere Zustände u. s. w. էջ. 14. Halle, 1904:

2 Ghazarian, Armenien unter d. Araberrschaft էջ 96:

3 Baladuri, 197, 20 էն:

4 Alf. v. Kremer, Denkschriften d. Wiener Akademie, էջ 325, 1888:

5 Ղևոնդ, Գ. իթ., էջ 130, Պետերբուրգ 1887:

6 Chronique de Denys de Tel-Mahré, IV-ème partie 1888, trad. fr. par l. B. Chabot էջ 74/75. Paris 1895:

Հողերը ծախելու պատճառ ցույց ե տրվում գյուղացիության վրա դրված հարկերը Հգանձվելը։ Գյուղացիությունը ճարահատյալ գաղթում էր։
Յեթե պետական հողերի մասին այս ձևի քաղաքականությունն եր տարվում, ուրիշ պատմական վկայություններ թույլ են տալիս մեզ յեղ- բակացնելու, վոր աբաբական իշխանությունը հովանավորում եր այն ա- բաբներին, վորոնք բռնի գրավումներով տեղացի ֆեոդալները քշում եյին իրենց սեփականություններից։ Այսպես, Բերկրիի Գնունինները քշվում եյին Ուտամանիկներին կողմից¹։ Կամսարականները Արշարունիքից² արաբ Զա- հապյանների կողմից․ սրա հետևանքով ե, վոր Կամսարականները այդ մա- սը վաճառում են Աշոտ Մսակերին³։

Արաբները դեպի հոգևոր իշխանները՝ վարում եյին մեղմ քաղաքա-
կանութիւն: Սակայն, մի շարք պատմական փաստաթղթեր ցույց են տա-
լիս, Վոր արաբական տիրապետութեան շրջանում անտեսապես ուժեղացող
հայ յեկեղեցիքն³ ևս գերծ չէր այդ բռնազրպովումներէջ:

Սա. Որբելյան պատմիչի 9-րդ և 10-րդ դարերից մեկ հասցրած մի քանի փաստաթղթեր, լիորոնք վերաբերում են յեկեղեցիին յեղած նվիրատուություններին, պարունակում են հետևյալ հաաքքեր վերջաբանները.

«...Եւ եթէ տաճիկ տապօթիւն լիութի և յալիշտակել ջանայ,
հազարէն հազար ճալաթ ի վերայ նորա վայ, և յիւր փեղամբարէն
ապիգար լինի»:

Lyons,

կամ,
«... և թէ ի տաճիկ աւագութիւն հասանի և յափշտակել ջանայ
յաստուծոյ և յիւր փեղամբարէն ապիգար եղիցի, և բիւր 1.000
նալար եղիցի...»

h h w d

և Լամ
 «...և թե տաճիկ աւագ լինի և յափշտակէ՝ յատուծոյ և յիւր
 փեղաժբարէն որոշած լինի և յամենայն սրբոց նդովեալ և 100,000
 Գալաթ»⁴։

Գալար»⁴։
Այս փաստաթղթերը կասկած չեն թողնում, վոր տիրողների կողմից հողային բռնազրավումները սովորական մի յերևույթ ե յեղել։ Յեթե վորտ արտոնություններ վայելող հողերը իշխանների հանդեպ բռնազրավումներ լինում եյին, ապա շատ հավանական ե, վոր նրանք ավելի մեծ համեմատություններով պիտի արտահայտվեյին աշխարհիկ իշխանների մասին։

մասին:
Բանակի մարդկանց ավատներ տալու, ինչպես և հողային բռնազրա-
վումների կողքին, պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, Վր

¹ ♂. U p δ p n e n b, III, 28, h₂ 247. 5 dm. 7 mm Marquart, Streifzüge, h₂ 404;
Streifzüge h₂ 403, 5, 451 54:

¹ 10. Upr δ p n l u p, |||, 28, hq 247. 403/5, 451/54: Streifzüge hq 403/5, 451/54:

2 Վարդան, Էջ 76, հմմտ. նաև Marquart, Streizuge Էջ 403/3, 404/3.

3 Հիշյալ դարերում յեկեղեցիին խոշոր սեպականտոներ դառնալու մասին ունենք ուշագրավ փաստաթղթեր Ստ. Որբեյան պատմչի մոտ: Մյուսերում յեկեղեցական հողային սեփականությունը յերեւել հանելու տեսակետից հետաքրքիր, մանրագրաֆիկ ուսումնասիրության նյութ կարող է լինել հիշյալ պատմչի մեկ ծանցարած փաստաթղթերը:

4 Մարտի 26/5. Գ. Ճալ, Էջ 13, Գլ. Ժզ Էջ 47, Փարիզ 1859.

⁴ Ստ. Ուրբեղյան, Գլ. Լս. էջ 265, Գլ. ծա, էջ 13, Գլ. ձգ էջ 47, Փարիզ 1859,
մաս I և II:

մի շարք քաղաքների սկսած 7-րդ դարուց դառնում են արաբների բնակատեղիին: Այսպես Ամիդը, Մանսուկեքտը, Բերկրին, Արզնը, Դվինը, Դատվանը Նախիջևանը, և Կարինը¹: Հետագա դարերում այս քաղաքներում առաջանում են խոշոր հողատերեր, վորոնք դառնում են վճարող քաղաքական ուժ: Անշուշտ, հետագա դարերի այդ արտահայտությունը արդյունք էր աստիճանական այն պրոցեսին, վոր կատարվում էր այդ քաղաքներում հատատվող յեկվորների կողմից:

Մասնանշված այս յերեք հիմնական մոմենտները, անտարակույս, խոշոր փոփոխություններ առաջացնում էլին հողային սեփականություն փոխարարելություններում: Սակայն, սրանք դեռևս ևս անզոր էլին արաբական պետության առաջադրած նվաճումը լրիվ իրագործելու:

Բ. Տեղացի ֆեոդալների տնտեսական և քաղաքական իշխանությունը տկարացնելու տեսակետից բացի այն, վոր միայն 15.000 հոգինոց բանակ ունենալու իրավունք եր տրվում, արաբական պետությունը շարունակում եր այն հալածանքները, վորոնք տեղի եյին ունեցել նախորդ դարերում: Այս տեսակետից բավական ե հիշատակել միայն Արդուլ Մելիք խալիֆի որով՝ Միջագետքի, Հայաստանի և Ատրպատականի եմիր Մոհամեդ բին Մերվանի Նախիջևանում և Խրամում հայ ավատապետների համար կազմակերպված ջարդը 8-րդ դարու սկզբում²: Նույն դարու վերջին կեսին տեղի եր ունենում Բագրևանդի ճակատամարտը, վորը ճակատագրական նշանակություն ունեցավ այնքան ուժեղ Մամիկոնյան նախարարության համար: Այդ ճակատամարտից հետո անցյալի հասարակական կյանքում խոշոր դեր կատարող Մամիկոնյան տոհմը չքանում եր հրապարակից: Նրանց կալվածները բաժանվում եյին այն նախարարական տունների միջև, վորոնք խալիֆատի վստահությունն եյին վայելում—Բագրատունիները և Արծրունիները: Այդ բաժանման մեջ անմասն չեյին մնում նաև արաբ ֆեոդալներ³:

Բացի հալածանքներից արաբացիները կիրառում եյին նաև տեղացի ֆեոդալները իրար հետ կռիվեցնելու և այս կերպ նրանց տկարացնելու քաղաքականությունը: Պետական պաշտոններ այլազան նախարարությունների հանձնելով կամ միաժամանակ նույն պաշտոնը յերկու տարբեր նախարարական տունների տալով: Այս կերպ նրանց միջև ստեղծվում էր մրցակցություն, ժող հաճախ վերջանում էր արյունահեղ կռիվներով:

Թե՛ առաջին և թե՛ յերկրորդ պարագաներում ամենից ավելի տուժողները լինում եյին փոքր ազնվականները, վրոնք ուժեղ ֆեոդալների մոտ պաշտպանություն եյին վրոնքում և մտնում նրանց ծառայության մեջ և դառնում վասսալներ: Ժամանակի ընթացքում նրանց հողերը կլանվում եյին մեծերի կողմից: Այս տեսակետից նվաղ դեր չեր կատարում նաև դրամական հարկաւին քաղաքականությունը, վրի մասին խոսել ենք վերև մեր

¹ Արաբական գաղութների մասին հմտ. Թ. Վ. Զյաշ. Die innere Zustände u. s. w., հօ 14—22:

² 2. 4. n. 5. n. 9. 1. q. b. 56. Marquart, Streifzüge b. 448:

3 𐎧𐎡𐎢𐎡𐎧 𐎧𐎡𐎢𐎡𐎧 𐎡𐎢𐎡𐎢𐎡𐎧 𐎡𐎢𐎡𐎢𐎡𐎧, 183. Marquart, Streifzüge, h² 37, 403 h⁵, 452 h⁵.
 𐎧𐎡𐎢𐎡𐎧 Ghazarian, Armenien unter d. Araberherrschaft, h² 49:

մատնանշած ռեսուսիտացիայի մեջ և ցույց տրվել թե ինչպես այդ դրամական հարկերը քայքայման էլին հասցնում փոքր ազնվականությունը: Հաճախ տուրքերի պատճառով նրանք ստիպված էլին վաճառել իրենց սեփականությունը:

Արաբների՝ Հայաստանը տնտեսապես նվաճելու այս հետևողական քաղաքականությունը ստանում էր 9-րդ դարում բոլորովին այլ բովանդակություն, յերբ բաղձաթիվ ֆեոդալները վերանում կամ վասսալ դառնում էլին և ստեղծվում էլին փոքրաթիվ, սակայն տնտեսապես վերին աստիճանի ուժեղացած նախարարական տուներ: Այդ ուժեղ ֆեոդալները, ոգտվելով խառնված տեղացիների և արաբական պետության սահմաններում ծագած լիֆատի տեղացիներից և արաբական պետության զորություններից, կարողանում էլին իրենց տնտեսական զորությունները քաղաքական իշխանություն ձեռք բերել: Դադարաշատը իրավացի է, յերբ գրում է.

«Բաբելը մեծագույն ազդակն է IX դարում հայ մասնակի իշխանների ուժեղացման համար. քսան տարի շարունակ իր հաղթություններով ան խալիֆատը զբաղեցրեց, նրանց ազդեցությունը Հայաստանի վրա բոլորովին թուլացրեց, և մինչ այդ հայ մասնակի իշխաններ ժամանակ շահեցան տնտեսական և զինվորական տեսակետից ամրանալու»¹:

Թեև մի կողմից այնքան նշանավոր նախարարական տուներ, ինչպիսիք Մամիկոնյանները, Կամսարականները, Սահառունիները, Ռաշունիները, Գնունիները և ուրիշներ, վորոնք նախորդ դարերին խոշոր հասարակական ազդեցություն ունեյին, ժամանակի ընթացքում անհետացան կամ դադարեցան վորեւ մի դեր խաղալ Հայաստանի հասարակական կյանքում², մյուս կողմից մի քանի իշխանական տուներ, ինչպիսիք՝ Բագրատունիները, Արծրունիները և Սյունիք իրենց հողամասերը մեծ չափով մեծացրին:

Հայաստանի ֆեոդալների հողային սեփականությունների մեջ առաջացած այս փոփոխությունների մասին Թովմայանի կատարած ուսումնասիրությունից գալիս ենք հետևյալ յեզրակացությունը.

9-րդ դարի վերջին քառորդում, Հայաստանում վորպես խոշոր հողատերեր հանդես են գալիս. 1. Բագրատունի, 2. Արծրունի, 3. Սյունիքի, 4. Անձեաջայ, 5. Մուկի, 6. Ջանարքի, 7. Խաչենի, 8. Ուտիքի, 9. Գուգարքի, 10. Գարդմանի իշխանները. (6—10 հիշվածները գտնվում են Աղվանից յերկրում):

Այստեղ I-ի ժամանակ Բագրատունիները տեր էլին ողինակ՝ Բագարանի, Շիրակի (մայրաքաղաք Շիրակավան), Վանանդի (մայրաքաղաք Կարս), Անիի, Տայքի մի մասին և Արագածոտնի լեռնամասին մինչև Յերևան քաղաքը: Նոր գրավումներով այս յերկրամասերը ավելի ընդարձակվում են³:

¹ Daghbaschian, Gründung des Bagratiden Reiches u. s. w. էջ 7:

² H. Topdschian. Polit. u. Kirchengesch. Armen. Mit. d. Sem. f. orient. Sprachen Jahrg. III, 2 Abt. էջ 139, Berlin 1905:

³ Ibid էջ 185 36. 195:

Արծրունիները, վորոնք նախապես Աղբաղում կալվածներ ունեյին, վերև հիշած ժամանակաշրջանում տեր էլին Վասպուրականի և կարողացան նոր նվաճումներով, մասնավոր Գագիկ I-ի որով (904—909 թ.) իրենց կալվածները նմանապես ընդարձակել: Հետևանքը լինում է այն, վոր Բագրատունիների և Արծրունիների միջև իշխանության հարցի շուրջ պայքար և առաջանում: Պայքարը մղվում էր նախ խոյ քաղաքի մասին ապա՝ Բերկերի, Մանազկերտի, Խլաթի և Բաղնի մահմեդականների վրա գերիշխանության հարցի շուրջ:

Սյունիքի յերկու իշխանական տուները իշխում էլին ամբողջ Սյունիքին:

Այս յերեք իշխանական տուները այն ժամանակ ամենից ուժեղն էլին: Վորովհետև, Մուկաց և Անձեաջայի իշխանական տուները գտնվում էլին Արծրունյաց ազդեցության տակ և վերև հիշված 6—10 իշխանական տուները Բագրատունիների ազդեցության տակ⁴: Աղվանից իշխաններին առավելագույնս վտանգ էր սպառնում Ատրպատականի մահմեդականների կողմից. ուստի նրանք հենվում էլին Բագրատունիներին:

Հոգևոր իշխանների կալվածների մասին բավական տեղեկություններ ունենք Ստ. Որբելյանի մեզ հասցրած փաստաթղթերում և Վիմական Տարեգրի արձանագրություններում, վորոնցից վորոշակի յերևում է, վոր տնտեսապես ուժեղացած աշխարհիկ իշխանները «իրենց հոգվի վերկության» տնտեսապես իշխանների նվիրատվություններ են անում յեկեղեցիներին համար առատորեն հողային նվիրատվություններ լինում են յերբեմն «հայրենատեր» գյուղացիության հաշվին⁵:

Այն հանգամանքը, վոր արաբական պետությունը, առնասարակ, դեպի հոգևորականները և նրանց սեփականությունները համեմատաբար զիջող քաղաքականություն է վարել, մեզ թույլ է տալիս յեզրակացնելու, վոր այս ժամանակաշրջանում նրանք հանդիսանում են առնվազն նախորդ դարերի խոշոր հողատերերը:

Մի քանի նախարարական տուների ձեռքում գտնվողների կենտրոնացումը հոգևոր իշխանների համար ստեղծում էր նպաստավոր հանգամանք:

Մեր դրած առաջին հարցի քննությունը մեզ բերավ հետևյալ յեզրակացություններին.

ա) Ֆեոդալական Հայաստանում առաջացել էլին արար հողատերեր: Իբն Հաուքալի կողմից արտաքին Armenia անվանված մասում գոյություն ունեցող քաղաքներում, մասնավորաբար, հաստատվում են արաբներ. հառաքար առևտրականներ: Այս մասին ունենք Դենիսի մի վկայությունը 769/770 թ. վերաբերող, վորից յերևում է, վոր այդ քաղաքներում Մուսուլից գաղթած ժողովուրդը խոշոր հարստությունների տեր է դարձել: Ե) Ներքին ֆեոդալներից մի քանիսը կարողացել էլին կարացնել իրենց տե-

¹ Markwart, Südarmenien u. die Tigrisquellen էջ 801/2 note 811:

² H. Topdschian, Polit. u. Kirchengeschichte u. s. w. էջ 142, 152, 156/57, 198, 200:

³ Ստ. Որբելյան, Գլ. IV, էջ. 200, Գլ. VI, էջ 218 2, Գլ. VII, էջ 253 2. Գլ. VIII, էջ 259:

⁴ Chronique de Denys de Tell-Mahrè, tr. I. B. Chabot էջ 92:

ընտրությունները և վաստակ դարձնել մանր ֆեոդալները: Նրանց տնտեսական այս ուժեղացումը հետագայում հնարավորություն է տալիս «թագավորիկ» դառնալ: Այդ ֆեոդալները ապրում են իրենց մայրաքաղաքի ապարանքներում, վորտեղ հավաքվել էյին նաև վաստակ իշխանիկները: Փոքրաթիվ, սակայն տնտեսապես ուժեղ այդ աշխարհիկ ֆեոդալները իրենց քաղաքական իշխանություն համար կարիք ունեյին հոգևոր իշխաններին: Յեթե ամենայն հայոց կաթողիկոսը Բագրատունիներին եր հավանավորում, Արծրունի և Սյունյաց իշխանները ևս ունեյին իրենց յեպիսկոպոսները: Այդ հոգևոր իշխանները իրենց կատարած ծառայությունների համար լիովին վարձատրվում էյին:

2) Ի՞նչ անդրադարձում ունեցավ հողատիրական այս նոր փոխհարաբերությունը ֆեոդալական Հայաստանի քաղաքների զարգացման վրա:

Այս անդրադարձումը, գլխավորաբար, տեղի եր ունենում յերկու ուղղություններ:

ա) Փոքրաթիվ, սակայն տնտեսապես ուժեղացած այդ խոշոր ֆեոդալները, իրենց բնակությունը հաստատելով գոյություն ունեցող և զարգացման պրոցեսում գտնվող քաղաքներում, հնարավորություն եր ստեղծվում այդ վայրերում խոշոր ֆեոդալին յենթակա զավառներից հարկի ձևով գանձվածները կուտակելու: Բացի այս, այդ խոշոր ֆեոդալի շուրջ ավելի մեծ թիվով անաշխատ սպառողներ էյին հավաքվում: Թե՛ մին և թե՛ մյուսը հարմարագույն պայմաններ ստեղծում էին զրամական հարկերի պատճառով հասարակական աշխատանքի մեջ սկսած բաժանումը խորացնելու:

Պետք է նկատի ունենալ նաև մի շարք հանգամանքներ ևս, վորոնց կոմպլեքսի մեջ և նրանց միջոցով միաժամանակ կատարվում և այդ փոխազդեցությունը:

Մեթոդական տեսակետից կատարած մեր բաժանումներում յերաքանչյուր տնտեսական ազգակ դործնական կյանքում խաչաձևում, ներգործում են միմյանց վրա:

Բացի արտաքին հարկերի մեծագույն մասի զրամական ձև ստանալուց, պետք է նկատի ունենալ զարգացման պրոցեսում գտնվող քաղաքները և վոր կարևորն է այդ քաղաքներից անցնող արևելքի և արևմուտքի առևտրական ճանապարհների ցանցը: Իսկ առևտրական կապիտալի կողքին, նրա անբաժան ընկերակից վաշխառուական կապիտալը, վորի շահագործումները, ինչպես կը տեսնենք մեր ուսումնասիրությունյան վերջում, որինականցվում են:

Տնտեսական այս խաչաձևող ազդակները մեջ առ այժմ անհրաժեշտ է ընդգծել այն, վոր ապրանքափոխանակություն այս ժամանակաշրջանում թե՛ հոգևոր և թե՛ աշխարհիկ իշխանների տնտեսական պահանջները ավելանում և բազմանում են. այս կերպ անդրադառնելով իր հերթին առևտրական կապիտալի աշխուժացման վրա:

Այս յերևույթը անդրադառնում եր այն բանի վրա, վոր նախկին շրջաններում, յերբ բնահարկը գանձվում եր ֆեոդալական իշխանների սպառողական կարիքների համար առավելապես, այժմ կուտակված այդ կարիքները դառնում էյին ապրանք: Սրանով մի կողմից բնահարկի գանձման սահմանները վերանում էյին և մյուս կողմից հարկահավաքման պահանջը դառնում եր անսահման:

Մեր կարծիքով այս մասին և Արիստ. Լաստիվերտացիի ակնարկությունը, վոր անում է ժամանակի առևտրական կենտրոններից միումյն 1049 թ. ի Արծնի մասին:

«... վաշխից և տոկոսեաց օրէնք եղան, և ցորենոյ բազմապակուքիւն, որով երկիր պղծի...»¹

Առաջին պարբերություն մասին մենք ստորև խոսելու ենք: Այստեղ հետաքրքրականը՝ «ցորենոյ բազմապակուքիւն» դարձվածքն է, վոր անկասկած արտադրող դասից գանձվող բնահարկն և ակնարկում: Պատմիչը իր այս տողերում մեզ տալիս է զարգացման այն պրոցեսը, վորով ընթանում էյին այդ քաղաքները:

Վոր այդ կուտակվող ցորենը ապրանք էր դառնում, այդ հաստատվում և արար պատմիչ Տարսրիի վկայությունով, վորի համաձայն Հայաստանից դեպի Բաղդադ հացահատիկ արտածվելիս և յեղել²:

Արդոք իշխանական դասը իր տնտեսական կարիքները բավարարելու համար միայն բնահարկ եր գանձվում թե՛ հարկի վորոշ տեսակներ զրամականի էյին վերածվել: Այդ մասին ունենք շահեկան վկայություններ Ս. Որբելյանի փաստաթղթերում և Վիմական Տարեգրի արձանագրություններում: Յերկու վկայություններ ցույց են տալիս, վոր իրապես ներքին իշխանների կողմից գանձվել են վորոշ զրամական հարկեր:

Այսպես, Ստ. Որբելյանի մոտ կարգում ենք 903 թ.-ի հայոց սպարապետ Շապուհ Բագրատունիի թողած մի փաստաթղթում.

«...Եւ ետու հինգ գեղոց սահման՝ Կոթաքարն, Աղարոյ վանսն, Շաւառնահողն, Գետամէջն, Կթանոցն, Գետավանաց ծովն, 260 դրամ ի Կոթաքարէն, 530 ի Բրտենեացն, 660 յԱղարոյ վանացն ծովէ, 990 ի Կարբին գետերէն և ի նաւերէն:»³

901 թ.-ի Մաքինացոց վանքին յեղած նվիրատվությունյան մեջ կարգում ենք.

«... եւ Սուփան, Սյունյաց իշխան... ետու որս ձկանց... և եւթն հարիւր դրամ ի Դեղձանգետոյ զապալէն, երկու հարիւր դրամ ի Կաթկայ, երեք հարիւր յիսուն յԱնմեռէն, որ լինի ՌՄԾ դրամ, և ետու հինգ կուղակ յԱնի...»⁴

¹ Արիստ. Լաստիվերտացի, Գլ. ժբ. էջ. 53/55, Վենիսիկ 1844:

² Տարսրի III 272, 275 տես Chazarian, Armenien unter Araberherrschaft էջ 68:

³ Ստ Որբելյան, I Գլ. լե, էջ. 226/27. Հմմտ. նաև Կ. Կոստանյանց, Վիմական Տարեգիր, էջ 6:

⁴ Կ. Կոստանյանց, Վիմական Տարեգիր, էջ 5. Ստ. Որբելյան, I Գլ. լե, էջ 223/24. այստեղ շահեկան է այն հիշատակությունը, վոր Սուփանը, Սյունյաց իշխան, Սնիում կուղակներ է ունեցել:

Ստ. Որբելյանի պատմութեան վերջում բերված «Սիւնհայ երկոտասան գավառաց հարկ եկեղեցւոյ ըստ հին սահմանին» ցուցակում գյուղերի անվանումները թվանշանների մասին Շահնազարյանցը (հրատարակիչը) հետևյալ ծանոթութունն է տալիս մեզ:

«Արաբացի թիւքն ցուցանեն զորքանութիւն մարզանից ցորենոյ զոր շէն իւրաքանչիւր իրր գաւազանապտուղ, և նոյն քան դահեկան (փանահապատ) որ է կէս դոն իրր աթոռահարկ, տայ ամի ամի Տաթեայ վանիցն»¹:

Համաձայն այդ ցուցակի 682 գյուղեր 1304 թ.-ից առաջ վանքին հարկատու են յեղել: Շահնազարյանցը, ինչպես տեսնում ենք, չի տալիս մեզ թե ինչ հիման վրա գավազանապտուղը բնահարկով եր վճարվում և աթոռահարկը դրամահարկով:

Բրոսեն ել ընդունում է թե բնահարկ և թե դրամահարկ և հաշվում է 189,870 բեռ ցորեն և 1012 ո. 12 կոպ.²: Դեռևս Ալիշանը ընդունում է միայն բնահարկ³:

Յեթե թաթարական շրջանին վերաբերվող այս վկայութեան մեջ դրամահարկի գոյութիւնը պարզաբանվի, կարող է այս վկայութիւնը մեծ չափով լույս սփռել նաև անցյալ դարերի վրա:

Մի կողմից արտաքին իշխողների վճարված հարկերը, մյուս կողմից տեղացի աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների գանձած հարկերը գյուղացիութիւնը մատնում է ելին ծանր կացութեան: Ան ստիպված պիտի լինեն բացի հողամշակութիւնից ապրուստի այլ միջոցներ վրոնել: Դրամական հարկերի ներմուծով հաւարակական աշխատանքում սկսած բաժանումը այս վերջինի պատճառով ել ավելի խորանում էր:

Ապրանքափոխանակութեամբ ֆեոդալների տնտեսական կարիքների ավելացումը և բազմազան դառնալը, յեթե արտադրող դասի վրա այս անդրադարձումն եր ունենում, ապա հողամաս երի կենտրոնացումը վրաբանութիւն ֆեոդալների ձեռքում մի այլ ուղղութեամբ գալիս եր շահագործման այս պրոցեսը խորացնելու:

Մենք ակնարկում ենք վարչական այն փոփոխութեան, վորին վերստին հանդիպում ենք 9-րդ դարում:

բ) Փոքրամթիւ աշխարհական տուների միջև հողամասերի կենտրոնացումը առաջին հերթին առաջացրել է այդ հողամասերի կառավարման մեջ վարչական փոփոխութեան: Խոշոր ֆեոդալը, վոր գտնվում եր քաղաքում, ի վիճակի չեր անձամբ հսկողութիւնը կատարելու և հարկերը հաշվարկելու: Այս մասին ուշագրավ վկայութիւններ ունենք Թովմա Արծրունիի մոտ, վորոնք վերաբերում են Արծրունիների հողամասերին.

«...Բայց զերկրորդ մասն Անձաւացեաց հանդերձ նորաբերդ ամրոցաւն Դերանիկն նուաճեալ ընդ իւր գործակալօք, և զՄար-

¹ Ստ. Որբելյան, II, Գլ. հդ. էջ. 259. ծանոթ. 190:

² Brosset, Histoire de Sijanie, 1, ch. 74, էջ 289 note 4.

³ Դեռևս Ալիշան, Սիսական, էջ 22/23

դաստան դաւառ զբուն բաժին տուեալ ցԳուրգէն և նորա զիւր գործակալս թողեալ անդր»¹:

«...Բայց զաշխարհն Յիսէ որդին Շեհայ բռնադքօսեալ յինքն գրուեաց և կացոյց ի վերա նոցա զիւր գործակալս»²:

«...և զտուն և զստացուածս հանեալ ի նմանէ (Հասանից) և կացոյց աշխարհին զիւր գործակալս»³:

և կամ,

«...տեղի տայր (Գագիկ) բովանդակ զա առապետաց զօրազլխաց...»⁴

Իսկ Սյունիքի մասին Ստ. Որբելյանի մոտ կարդում ենք.

«Ժողովեալ ժամանեցին և ամենայն ազատք և գործակալք Սիսական աշխարհիս...»⁵

Այս վկայութիւններում հիշատակված «գործակալ», «գործակար», «գաւառապետ» բառերը ցույց են տալիս հողամասերի ընդարձակումով ներառել կառավարելու համար ստեղծված վարչական փոփոխութիւնը:

Այս կերպ նախկին մանր ֆեոդալներին փոխարինում էլին վարչական պաշտոնյաներ: Յեթե այդ նախկին մանր ֆեոդալների շահագործումը կամ նվազ չափով նահապետական եր, վորովհետեւ նրա հպատակները ֆեոդալի իշխանութեան տեղականացման միջոց էլին ծառայում, նոր վարչական պաշտոնյաներին այս վերջին մոմենտը վոչ մի շահագրգռութիւն չեր ներկայացնում: Այդ պաշտոնյաներից նրանք, վորոնց հանձնված եր հարկահավաքման պաշտոնը, կատարում էլին այդ առանց վորեւ բան նկատի առնելու:

Բացի այն, վոր այս կերպ արտադրող դասը ստիպված եր լինում ձրիակերների մի նոր խումբ ևս կերակրելու, ավելանում էլին սրա վրա այդ պաշտոնյաների բազմամթիւ կամայականութիւնները, վորոնք, անկասկած, հաճախ ավելի ծանր էլին լինում քան սահմանված հարկերի գանձումը:

Այս ցավոտ հարցն է շոշափում Ներսես Շնորհալին իր «Ընդհանրական թղթում», յերբ նա խոսքը ուղղում է իր ժամանակի իշխաններին.

«Եւ արդ՝ առաջին դայս պատուիրան աւանդեմք ձեզ, մի անիրաւաբար վարիք առ հնազանդեալդ ծանր և դժուարակիր հարկադրութեամբ՝ զոր ոչ կարեն բառնալ:

1 Թովմա Արծրունի, III, Գլ. ժե. էջ 209:

2 Ibid, III, Գլ. ի. էջ 221:

3 » , III, Գլ. ի. էջ 225:

4 » , III, Գլ. ի. էջ 228:

5 Ստ. Որբելյան, II, Գլ. ծը. էջ 57/58:

6 Այս մասին Թովմայի նկատում է հետևյալը (Die innere Zustände էջ 25/26)

«9-րդ դարի յերկրորդ կեսին առաջին անգամը լինելով, սկսան խոշոր հողատերերը (հայ) արաբական որինակին հետեւելով մի պաշտոնեութիւն կազմել: Այն նոր հողամասերը, վոր անոնք գրավում էլին, բաժանում էլին գավառների և նշանակում վարչական պաշտոնյաներ, կուսակալներ (գաւառակալ)»:

...Մի չար և անիրաւ գործակալս և գաղառապետս կացուցանէք ի վերայ աշխարհի ձերոյ... այլ զարդարամիտս և զարգարադատս ընտրեցեք ունել ի վերայ մարդկան զգործակալութիւն, զի մի գարն քունական սահմանեալ իրաւունսն վաստակաւորացն՝ թողցեն վասն սակաւ կաշառացն զբաղումն, և կամ ինքեանք գողացեն. և մի առաւել քան զհրամայեալսն նեղեցեն զնոսա և առցեն...»¹

Այս կերպ վոչ միայն ապրանքափոխանակութեամբ ստեղծված նոր փոխարարեցութիւններում արտադրող դասի շահագործումը ավելանում էր, այլ հողամասերի կենտրոնացումով առաջացած այս փոփոխութիւնը խորացնում էր շահագործման պրոցեսը:

Յեթե այս շահագործումը մի կողմից հանդիսանում էր հասարակական աշխատանքում առաջացած բաժանումը խորացնող ազդակ, մյուս կողմից հանդեսանում էր քաղաքներում ապրող ֆեոդալական դասի ստեղծած հակադրութիւնը քաղաքի և գյուղի միջև:

Այս շահագործումով պայմանավորվում էր մի այլ ավելի քայքայիչ շահագործում, վորը կատարվում էր քաղաքների վաշխառուական կապիտալի ներկայացուցիչների կողմից:

Այժմ հարկավոր է քննել թե ի՞նչ էին ներկայացնում իրենցից ֆեոդալական Հայաստանի այդ քաղաքները:

II ՔԱՂԱՔՆԵՐԻ ԲԱՐԳԱՎՍՃՈՒՄԸ

Արաբների զրամական հարկային քաղաքականութիւնը, հողատիրական նոր փոխարարեցութիւնները, ինչպես տեսանք, մի շարք տեսակետներից արտադրող դասի կեղեքումները սաստկացնում էին:

Այս դրութեան անմիջական հետեանքը լինում էր այն, վոր արտադրական աշխատանքում բաժանում էր առաջանում և վերջինս խորացման պրոցեսով ընթանալով, առաջ էր բերում արտադրական նոր հարաբերութիւններ, վորոնց անմիջական արտահայտութիւնը մենք տեսնում ենք սովյալ ժամանակաշրջանում քաղաքների բարգաւաճման մեջ:

Մեր այս դիտողութիւնը պիտի լինի անկատար յետեւ մենք նկատի չառնելինք մի շարք ուրիշ հանգամանքներ ևս, վորոնք գալիս էին ներքին այս շարժումը ավելի խորացնելու և կերպարանավորելու:

ա) Արաբական տիրապետութեան շնորհիվ Առաջավոր Ասիայում ստեղծվել էր քաղաքական մի ամբողջական յերկրամաս: Մասնա ֆեոդալական սահմանները և նրանց հարուցած դժվարութիւնները, ընդհանրապես և մեծ մասամբ, վերացել էին: Մի պարագա, վոր վերին աստիճանի նըպաստավոր էր մի յերկրի համար, վորտեղ ապրանքափոխանակութիւն էր կատարվում:

բ) Ֆեոդալական Հայաստանում տիրապետող պետութեան բանակների հաստատումը այն վայրերում, վորտեղ բերդեր գոյութիւն ունեցին և վորոնց պաշտպանութիւնը զինվորական տեսակետից անհրաժեշտութիւն էր:

էր ներկայացնում: Վերև մենք՝ հիշատակեցինք արդեն Կարինի մասին: Ֆեոդալական Հայաստանի միջնաշխարհում յերկրորդ հիմնական վայրը հանդիսանում էր Դվինը: Այդ զինվորական պաշտպանութիւնը անհրաժեշտ էր ամբողջ դարերի ընթացքում, քանի վոր Բյուզանդիոնի և Արաբիայի միջև Առաջավոր Ասիայի շուրջ հակամարտութիւնները շարունակվում էին: Այդ բերդաքաղաքներում բանակների հաստատումը տնտեսական տեսակետից նշանակում էր այն, վոր անաշխատ սպառողների քանակը ավելանում էր և ստեղծվում էր արտադրող դասի (յերկրագործ թե արհեստավոր) արտադրութիւնների շուկա:

Բացի բանակից, ինչպես տեսանք, Հայաստանի հարավային մասի մի շարք քաղաքներում հաստատվում էին արաբացիներ, վորոնք անմիջական հարաբերութիւններ պահպանում էին Հայաստանից դուրս: Մի պարագա, վոր կարևոր և նկատի առնել ապրանքափոխանակութեան աշխուժացման տեսակետից:

գ) Գլխավոր ազդակ հանդիսանում էր և այն, վոր սուլյն ժամանակաշրջանի յերկու գլխավոր քաղաքների, Բյուզանդիոնի և Բագդադի միջև Հայաստանի վրայով ստեղծվում էր տարանցիկ առևտուր և Միջերկրականի ափերից քշվում էին հուլյն առևտրականները:

Այս կերպ 7-րդ դարու կեսից սկսած արդեն իսկ գոյութիւն ունեցող քաղաքները մեծ թափով զարգանում էին և կամ ժամանակի ընթացքում ստեղծվում և բարգաւաճում էին ուրիշ քաղաքներ:

10-րդ դարում ֆեոդալական Հայաստանը ներկայացնում է իրենից քաղաքների իշխանութեան պատկերը. այնպես, ինչպես այդ տեղի էր ունեցել հին Հռոմաստանում և միջին դարում՝ Իտալիայում:

Այս դարում մենք հաշվում ենք ֆեոդալական Հայաստանում յոթը թագավորութիւն իրենց մայրաքաղաքներով:

1. 885 թվին հիմնվեց Մեծ Հայքի Բագրատունիների հարստութիւնը, վորի մայրաքաղաքը յեղավ Անին 954 թ-ին: Սմբատ I-ի որով վերածվում է գաճաճ Հայաստանի:

2. 909 թվին Արծրունիները դառնում են ինքնավար Վան մայրաքաղաքով:

3. 914 թվից Սյունիքի իշխանութիւնը գրեթե բոլորովին ինքնավար էր: Սյունիքի Սմբատ իշխանը (մեռած 998 թ-ին) 10-րդ դարու յերկրորդ կիսուն Սորաբանի սուլտանից հրաման առնելով թագավոր է հռչակում իրան:

¹ «Առաջին Բագրատունիները ընդհանուր մայրաքաղաք չունեցին... Միայն ավելի հետո... հետզհետե կառուցում էին խոշոր Անի բերդաքաղաքը, վոր պատմութեան մեջ ծանոթ է վորպէս Բագրատունիների մայրաքաղաքը»: H. Topdschian, Polit. Kircheng. u. s. w. էջ 165: Թուրքերը այն կարծիքին է, վոր Բագրատունիները Անին սկսում են կառուցել «յերբ նրանք խալիֆատից ամբողջովին անկախ են դառնում»: Մեր կարծիքով Բագրատունիների ամբողջական անկախութեան մասին խոսք չի կարող լինել. տես մեր հոդվածը «Արաբական հարկային քաղաքականութիւնը ֆեոդ. Հայաստանում», Պետ. Համալսարանի Գիտական Տեղեկագիր, № 2 Ցեքևան 1927 թ.:

² Թ. Արծրունի, էջ 264. Այս թագավորութիւնը Արծրունի նախարարութեան տրվում էր Յուսուֆի կողմից յերկու խոշոր ֆեոդալները կովեցնելու և տկարացնելու նպատակով: Յուսուֆը համարում է իր նպատակին: Ps. Թ. Արծրունի IV, Գլ. Գ. էջ 284:

³ Ս. Ս. Որբելյան II գլ., էջ 43:

4. Նույնպես Տայքը, վոր Մամիկոնյանների ժառանգական գավառն էր, անցավ Բագրատունիների տան վրացական ճյուղին, վորպես ինքնավար սեփականություն:

5. Շապուհի վորդին և Աշոտ II յերկաթի յեղբայրը, Աշոտ, Դվինի թագավոր եր անվանվում շնորհիվ Յուսուֆ եմիրին 921 թ-ից: Առանց հաջորդի մեռած է 936 թ-ին:

6. 962 թ-ին Վանանդի գավառը Կարս մայրաքաղաքով բաժանվում եր Բագրատունիների հաստությունից: Այս թվականից Բագրատունիների հարստությունը կոչվում է «Անիի թագավորություն»:

7. Ավելի ուշ 982 թ-ին, Բագրատունիների մեկ ուրիշ ճյուղը, Գուգարաց աշխարհում, Վրաստանի և Աղվանից սահմանի մոտ, հիմնում է թագավորություն, վորի վերջին մայրաքաղաքը լինում է Լոռին¹:

Ժամանակի ընթացքում հիմնվող այս փոքր թագավորական տուները հետեվանքով տեղացի իշխանների և ոտար կառավարիչների պահակազորքի թիվը ավելանում եր: Այս վերաբերում է, մասնավորաբար, Անի, Դվին, Կարս, Վան, Ախլաթ, Արճիշ, Արծն, Բերկրի քաղաքներին, վորոնք իբրև իշխանանիստ քաղաքներ կամ բանակատեղեր ֆեոդ. Հայաստանի տնտեսական կյանքի վրա սկսան խոշոր ազդեցություն ունենալ:

Հայ և արաբ պատմիչների և աշխարհագիրների, ինչպես նաև այլ ճամբորդների տված տեղեկությունները և անցյալի քաղաքների ավերակների մասին յեղած ուսումնասիրությունները (վերջինները շատ քիչ են մինչև այժմ) մեզ հնարավորություն են տալիս հետևյալ յեզրակացությունները անել:

1. Ֆեոդալական Հայաստանի քաղաքների մեծ մասը, անկասկած, տարբերվում էյին այժմյան քաղաքներից նրանով, վոր նրանց ազգաբնակչության վորոշ մասը կապված եր դեռ ևս յերկրագործության հետ: Այս հանգամանքը անհրաժեշտ է ընդգծել յերկու տեսակետից.

ա) Արտադրական աշխատանքի մեջ առաջացած բաժանումը ֆեոդալական շրջանում դեռ ևս չեւ հասել իր լրման և չեւ ել կարող հասնել տվյալ արտադրական ուժերի զարգացման սահմաններում:

բ) «Քաղաքի» բնակիչների վորոշ մասը յերկրագործական արտադրությունների սպառողներ չեյին հանդիսանում: Այս կերպ գյուղատնտեսական մթերքների համար ներքին շուկան դառնում եր ավելի նեղ:

Ֆեոդալական շրջանի «քաղաքը» այս հիմնական կետում տարբերվում է կապիտալիստական շրջանի քաղաքներից:

Թովմա Արծրունին 9-րդ դարու յերկրորդ կեսի Դվինի ազգաբնակչության պարագլուխները, դարձան յեղանակում, այսպես է նկարագրում.

«Եւ եղև իբրեւ ձմեռն փոքրացու և ժամանակ գարնանային եղանակին մերձեցաւ և օդն մառախլաձև միգախառն յտակեցաւ և հարաւային ջերմագոյն օդն շնչեաց ի խորագոյն դաշտն Դիւայ, և ընդամացեալ արմատքն ու բոյսքն զգենուլ սկսան զգօրութիւն, և

թռչունք և գաղանք ծանեան զժամանակ: գալստեանն իւրեանց, և աշխատասէր մշակքն պատրաստեցան ի գործ երկրասէր վաստակոցն, որսորդքն զինքեանց գործիսն պատրաստէին, և վաճառականքն զհեռաւոր ճանապարհացն խոկային պատրաստութիւնն, և հովիւքն տաւաղելով զգառինսն քշէին ի դաւարաբեր հովիտն և ամենայն ոք ազգա ազգս փութայր ի հնարս ինքեանց վաստակոցն մի զմիով ելանել»¹:

Մեր կարծիքով պատմիչի այս նկարագրականում բնաստեղծական կողմը ավելի շեշտված է: Մենք 9-րդ դարու Դվինի մասին, վորպես քաղաքի, այլ կարծիք ունենք: Այս վկայությունը բերինք վորպես նմուշ այն քաղաքների համար, վորոնք իրապես գտնվելիս են յեղել զարգացման այս աստիճանի վրա: Այսինքն, յերկրագործական պարագլուխքը գերակշռող տեղ է զբաղել նրանց մոտ:

Պրոֆ. Ն. Մառը Անիում իր կատարած պեղումների հիման վրա հայտնում է, վոր Անիի գյուղացին մեզ թողել և այլազան արտոններ²:

Այժմյան Խորհրդային Հայաստանի յերկու աչքի ընկնող քաղաքների, Յեւեանն ու Լենինականը, առաջինի այգիները, յերկրորդի «գեղացոց թաղը» անցյալի քաղաքներից ավանդ մնացած մնացորդներ չեն:

Արաբ պատմիչների և աշխարհագիրների մոտ մենք հանդիպում ենք մի շարք քաղաքների նկարագրությունների, վորոնք ապացուցում են, վոր այդ քաղաքներում յերկրագործական պարագլուխքը վորոշ տեղ է բռնել ազգաբնակչության արտադրության մեջ:

770 թ-ին Բերկրին Ղևոնդ պատմիչի մոտ հիշվում է վորպես «գյող» իսկ Արճիշը վորպես «գյուղաքաղաք»: Բերկրիի և Արճիշի հետագա զարգացման համար այս հիշատակությունները ուշագրավ են: Խլաթը այդ շրջանում արդեն «քաղաք» է: «Ավան» և «քաղաքագյուղ» գործ են ածվում միևնույն ժամանակի համար Արճիշի մասին³:

Նույնն է պատկերը նաև հարևան «քաղաքների» մասին: Այսպես, Իրն Հատիքալը Փայտակարանը նկարագրելիս ասում է.

¹ Թումաս Արծրունի, III գլ. Թ. էջ 172:

² Ճարտարապետ Թ. Թորոմանյանը Ազգ. Հանդեսում (գիրք XXI 1912 թ.) լույս է ընծայել մի հետաքրքիր հոդված «Անի քաղաք թե՛ ամրոց»: Մեկնելով այն հանգամանքից, որ այժմյան Անիի ավերակների վայրը հազիվ 4 քառ. քիլ. մ. տարածություն ունի, վոր բոլորովին անբավարար եր մեծ թվով բնակչության բնակավայր ծառայելու, մյուս կողմից նկատի ունենալով մեծ թվով աղատանիի գոյությունը, և վերջապես այն հանգամանքը, վոր պարիսպներից դուրս կան ավերակների մնացորդներ, ինչպես յեղեղեցի, գերեզմանատուն (մեկ ք. քիլ. մ.ից ավելի), հուշարձաններ և դամբաններ, ճանապարհ, ավերակներ և. ճանապարհի շրջանում փակքը, Բագնայր (Ղազլիճա), Արջո առիճո (Այաճա գյուղ) և ասոնց նման 4-էն մինչև 10 քիլ. մ. հեռավորության վրա այժմ ավերակ գյուղեր Անիի արվարձաններն էյին և անմիջական կապ ունեյին քաղաքի ներքին վարչական և տնտեսական գործերուն հետ: Թորոմանյանի այս կարծիքը չի՞ հաստատվում արդյոք Արիստ. Լաստիվերտացիի հետևյալ վկայությամբ.

«... Անի և որ շուրջ զնովաւ դստերք իւր՝ առաւել յամբարտաւանութիւն կրթեալ ընդդէմ երկնից կայթս հարկանէին»: (Արիստ. Լաստիվերտացի, Գլ. իդ. էջ 109):

Պրոֆ. Ն. Մառ, Անիի ավերակները «Արարատ» ամսագրում № 8, 1911 թ. էջ 662:

³ Ղևոնդ, Գլ. իդ. էջ 146:

«Անվանի քաղաք է ջուրով, ծառերով (անտառներով), այգիներով և միրգերով, ջրանցքներով, վորոնց վրա ջրաղացները յերգում են»¹։

Շերեֆ Ուզգիրը Լիվա Ամիրի մասին մեզ թողել է մի հետաքրքիր վկայություն, այն քաղաքի, վորը սուլթանի պատմիչ Դընին մեզ ներկայացնում է առևտրականներով լեցուն քաղաք դեռ ևս 769/770 թ-ին²։

«Դղյակին վերևը գտնված գետին յեղերքները», ասում է պատմիչը, «ներկայացնում են ձմերուկի և սեխի այգիներ, ուր ամեն մի բնակիչ իր հողամասը ունի... Ձմերուկի ժամանակ բնակիչները գնում են իրենց պարտեզը շինում են յեղեգե տնակ (kulibe) և մի քանի ուր հաճույքի և ուրախության անձնատուր են լինում։ Այս քաղաքը կարող է ամբողջ մի բնակիչ ձմրան ռթևան ծառայել»³։

Այս վկայությունը վորքան վերև մեր առածը հաստատելու տեսակետից հատկանշական է, նույնքան և բնորոշ ֆեոդալական քաղաքների ներքին կենցաղի տեսակետից։

Այս բոլորից կարելի չէ յեղրակացնել, վոր ֆեոդալական Հայաստանի քաղաքների խոշոր մասը գտնվում եր դեռ ևս, յեթե հնարավոր՝ և այսպես կոչել, յերկրագործական քաղաք վիճակում։ Այս միանգամայն հասկանալի չէ, յեթե մենք, առհասարակ, ֆեոդալական շրջանի քաղաքների զարգացման ենք հետևում։ Նրանք առաջացել են վոչ թե այն հանկարծական ձևով, վորին մենք հանդիպում ենք այժմ, որինակ հյուսիսային Ամերիկայում, այլ նրանց զարգացումը ընթացել է բոլորովին աստիճանական և արտադրական ուժերի զարգացման զուգընթաց. նրանց տիպը աստիճանական այդ զարգացման ընթացքում յեղել է տարբեր։

Անտարակույս, զարգացման ավելի բարձր աստիճանի վրա գտնվող քաղաքներ ևս գոյություն ունեցել են ֆեոդ. Հայաստանում։ Յեթե յերկրագործական քաղաքների տիպը անվանենք առաջին կատեգորիա, յերկրորդ տեսակի քաղաքները կարելի չէ կոչել առևտրական-արհեստավորական քաղաքներ։ Մեր ուսումնասիրության ընթացքում մենք աչքի առաջ ունենք այս վերջին տիպի քաղաքները։

Ինչպես ստորև կտեսնենք, մենք ունենք պատմական վկայություններ մի շարք քաղաքների մասին, վորոնք արտացոլում են վերև մեր արած բնորոշումը։

Յերբ Արիստ. Լաստիվերտացին 11-րդ դարի կարս քաղաքի մասին ասում է,

«... հարստացեալք բազում ընչհզովթեամբ ի ծովէ և ի ցամաքէ ամբարեալ»⁴։

և կամ խոսելով 1049 թ-ի Արծն քաղաքի մասին, ասում է,

«... և ծով և ցամաք երկնէր և առատանայր կրել ի սմազգորութիւն իւր»⁵։

¹ Իբն Հաուքալ էջ 244։

² Chronique de Denys de Tel-Mahré, iv-ème partie trad. I. B. Chabot, էջ 93 Paris 1895։

³ Cheref Ouddine, Cheref-Nameh trad. fr. par Bern. Charmoy, t. I, էջ 141։

⁴ Արիստ. Լաստիվերտացի, Գլ Ժե. էջ 61։

⁵ Ibid Գլ. Ժբ. էջ 53։

մեր կարծիքով, այս յերկրորդ քաղաքների հատկանշական վորակումն է անում պատմիչը։

Ուրեմն, ֆեոդալական շրջանի քաղաքները կաշկի չէ մի ընդհանուր հայտարարի տակ բերել։ Ֆեոդալական Հայաստանի ապագա մոնոգրաֆիկ ուսումնասիրությունները, մեր կարծիքով, պետք է լինեն այս հիմնական բաժանման հիման վրա։ Առանց այս տեսակի մերձեցման մենք պիտի հանդիպեինք պատմական վկայություններում վորոշ հակասությունների։

2. Ինչ վերաբերում է ֆեոդ. Հայաստանի քաղաքների շինությունյան արտաքին տեսքին, յեղած նկարագրությունները կասկած չեն թողնում, վոր նրանք յեղել են նույն ձևի, վորին մենք հանդիպում ենք ֆեոդալական Յերուսալի քաղաքների մոտ։ Ֆեոդ. Հայաստանի գրեթե բոլոր քաղաքները առաջացել են բերդերից։

Կարինը, Դվինը, Վանը, Անին շրջապատված են յեղել պարիսպներով¹։ Այդ պարիսպները պաշտպանելով գլխավորաբար իշխանական դղյակը, քաղաքի զարգացման զուգընթաց ժամանակի ընթացքում ավելի ընդարձակվել և ամրացել են։

Արևելյան քաղաքների միջնադարյան Յերուսալի քաղաքների նման լինելը տեսնում ենք Իբն-Բատուտայի նկարագրությունից²։

1717 թ. Պիտոն դը Դուրնըֆորը Հայաստան այցելելով մեզ թողել է երգրումի, Կարսի, Հասան-Քալեյի մասին նկարագրություններ և նկարներ, վորոնք հիշեցնում են ֆեոդալական Յերուսալի քաղաքները³։

3. Ֆեոդալական Հայաստանի քաղաքների թիվի մասին խոսելիս, մենք պիտի տալիս որդվենք, անկասկած, այն բաժանումով, վոր մենք վերև արեցինք։ Այսինքն՝ առաջին և յերկրորդ կատեգորիայի քաղաքներ։ Մեկնելով այս բաժանումից, մենք յերկու տեսակի սահմանավորում պետք է տանք ֆեոդալական Հայաստանի քաղաքներին։ Յեթե առաջինները տնտեսական իմաստով գյուղաքաղաք են, մենք այդ չենք կարող ասել յերկրորդ տիպի քաղաքներին, վորոնք իրապես հասել են զարգացման այն աստիճանին, վորի շնորհիվ ստեղծվել է քաղաքի և գյուղի հակադրությունը։

Յեթե այս բաժանումով մոտենանք ֆեոդ. Հայաստանի քաղաքներին, այն ժամանակ պարզ է, վոր մենք չենք կարող մեծ թիվով յերկրորդ տիպի քաղաքներ գտնել այնտեղ։ Այս առթիվ պատմագիրների տված վկայությունները պետք է մեծ զգուշությամբ և վերապահությամբ ոգտագործել։ Մեր ուսումնասիրության համար խոշոր նշանակություն ունեցող այս հարցի մասին մենք չենք կարող առ այժմ սպառիչ պատասխան տալ։ Մասնակի ուսումնասիրություններ հարկավոր են այս հարցի պարզաբանման համար։ Յեթե հնարավոր չէ վերջնական թիվ տալ այս մասին, ապա կարելի

¹ Իստախրի, էջ 188. Պրոֆ. Ն. Մառ, Անիի ավերակները «Արարատ» ամսագրում № 5, 1917 թ., էջ 399/400։

² Voyages d'Ibn Batoutah T. I, էջ 146 ևն, Paris 1853։

³ Pitton de Tournefort, Voyage du Levant, t. II էջ 260, 290 և 380. Ամիր, Պարբեր, Վան, Բիթլիս քաղաքների մասին հիմա. Cheref-Ouddine, Cheref-Nameh, T. I, էջ 141, 148, 164։



յե ասել այն, վոր յերկրորդ տիպի քաղաքների թիվը քիչ եր: Այս մասին
կարող ե վորոշ ուղեցույց լինել Մատթ. Ուռահեցիի մի վկայութիւնը. յերբ
վասպուրականի Սենեքերիմ թագավորը հունաց կայսեր կողմից Սերաս-
տիան ստանալով իր կալվածները նրան ե տալիս, նրանց մեջ հաշվում ե
«թեմաբերդս 72 ե գյուղս 4400»¹: Սամուել Անեցին սրանց վրա ավելա-
ցնում ե նաև «8 քաղաք»²:

Յնում է նաև «8 քաղաք»¹։

Յեթե վորոշ վերապահությամբ մոտենանք Հայաստանի հարավում մատնանշված այդ 8 քաղաքներին և մի մասը առաջին կատեգորիայի հաշվենք, այն ժամանակ տարանցիկ առևտուրի հանգույց հանդիսացող զավառում մենք ավելի քիչ թիվով յերկրորդ տիպի քաղաքներ կգտնենք։ Յեթե հարավում այդ եր դրությունը, Հայաստանի միջնաշխարհում և հյուսիս-արևմուտքում, մեր կարծիքով, այլ չե՛ր պատկերը։ Ուստի, ֆեոդալական Հայաստանի հազարավոր քաղաքների մասին խոսելը և կամ պատմիչների այս մասին տված վկայությունները անքննադատորեն յուրացնելը, նշանակում է անտեղյակ լինել ֆեոդալական Հայաստանի արտադրական ուժերի զարգացման չափին²։

4. Ինչ վերաբերում է քաղաքների ազգաբնակչության ընդհանուր թիվին, այլազան աղետների միջոցին պատմիչների տված տեղեկությունները՝

¹ Մատթ. Ուռա հեցի, էջ 41, վաղաբնական 1898:

2 Ս ա մ. Ա ն ե ց ի, էջ 104, Վաղարշապատ 1893. համաձայն Յ ա հ յ ա Ի ր ն Ս ա յ ի Դ ի վկայության՝ բերդերի քանակը ցույց է տրվում միայն ավելի քան 40. հմտ. A. Akulian, Einverleibung armenischer Territ. էջ 41:

3 թ ո փ չյ ա նը (Die Innere Zustände u. s. w. էջ 41) հիմնվելով մաքուտի և իբն-
ալ-Ֆաթինի տեղեկությունների վրա, ընդունում ե, վոր Փետող Հայաստանում յեղել են
«18,000 փոքր ու խոշոր քաղաքներ» և վոր միայն «Արաքսի յեզերքում 1000 քաղաք»:
Մար կվար Կառ (անձնական) հետևյալ նկատողությունն արգյուրը կազմում ե նշանավոր
քուտը, վոր իբն-ալ-Ֆաթինից արտագրել ե, վերջնայն արքյուրը կազմում ե նշանավոր
Ահմեդ իբն Ապիէն ալ-Յաբուքին: Իբն ալ-Ֆաթինի մոտ ամբողջ վկայությունը հետևյալն ե
(٢٩١ ۴). «Բն Ապիէն» տեղեկացնում ե, վոր իշխանությունների թիվը (Հայաստան
մամալիքահայի) 113 ե (Յաբուք 118), վորոնց մեջ ե գահակալող իշխանությունը (աս Սա-
մալիքներն յերկիր, վ ո չ Հայաստան), Աղվանից աշխարհի ե Բաբ-ալ-Աբվարի (Գարբա-
նի) միջև: Նա պարունակում ե 18000 դյուղեր (qarja): Աղվանը Հայաստանում առաջին իշ-
խանությունն ե. այնտեղ կան 4.000 դյուղ: Նրանցից ամենից շատը գահակալող տիրոջ դյու-
ղերն են: (Ֆաթինը ալեկացնում ե). Մնացյալ իշխաններն մոտ 4000-ը անցնում են և մնում
են գահակալող իշխանությունից (դյուղերի թվից) ցած:

(1907) 1—5

«Իբն ալ-Ֆարեհը՝ Յաբուտի մոտ (II ՎՎԳ և II ՎԼԴ 1—5) պատմում է մի լեզին-տա, վորի համաձայն նախապես Արաբսի մոտ Հայաստանում յեղել են 1000 քաղաք, վորոնք կործանվել են, վորովհետև մի Մովսես մարգարեյի հանդեպ վատ են վերաբերվել: Նման համարակալն տեղեկություն վոչ մի արժեք չունի»:

անքննադատական տեղեկություն վոչ մի արժեք չունի»։

Հովհ. կաթողիկոսի մոտ այն վկայությունը (եջ 176) թե Աշոտ Լ-ը «յարդարեր յաշխարհի տէրութեան իւրոյ, յօրինուածս տանց իւրոց, քաղաքաց, շինից— դաստակերտաց» պետք է ընդունել, մեր կարծիքով, այն իմաստով, վոր յեղածնեքի վրա շինություններ էին կատարվում։ Քաղաքները արդյունք են արտադրական ուժերի վորոշ աստիճանի զարգացման և վոչ թե մի իշխունի կամ թագավորի ցանկություն։

Լինդորտ առարկա քաղաքի ազգաբնակչության մասին չեն կարող վորեւե հիմք ծառայել¹։

Ուստի, քաղաքների ազգաբնակչության քանակի ժառին ևս մենք հնա-
րավորություն հունենք թվական տվյալներ տալ:

Մասնավորաբար, ոտար ժողովուրդների արշավանքների ժամանակ քաղաքների գրավման առթիվ ջարդված և գերի տարված ազգաբնակիչները ընդունել վորպես խնդրո առարկա քաղաքի ազգաբնակիչները, մեր կարծիքով, պիտի լինի բոլորովին սխալ: Հայտնի չէ, վոր նման վտանգների պահուն դաշտային անպատասխար ազգաբնակիչները խուժում եր այն վայրերը, վորոնք կամ արվեստական և կամ բնական ամրութիւններ եյին կազմում: Փեռդալական Հայաստանի քաղաքների մասին մեր հանած յերկրորդ յեզրակացութիւնը ցույց տվեց, վոր նրանք գրեթե բոլորը պարսպներով շրջապատված՝ ներկայացնում եյին իրանցից ապահով վայրեր: Վոր դաշտային ազգաբնակիչները վտանգի պարագաներում նման ապահով վայրեր եր ապաստանում, պարզ յերեւում է պատմիչների վկայութիւններէ:

Արիստ. Լաստիվերտացին յերբ պատմում ե Սելջուկ-թուրքերի խորձ-
յանում և Հանճիրթում կատարած արշավանքների մասին, մեզ հաղորդում ե.

«Բազում և անհամար հոգիք ի վերագոյն գաւառացն, վասն տեղեացն ամբողջեան՝ անդր ժողովեալ էին...»²:

¹ Մի շարք ուսումնասիրություններ ընդունելով այդ աղետների ժամանակ պատմիչները տված տեղեկությունները վերապես վավերական, մեզ հայտնում են, վոր 11-րդ դարում Անիի ազգաբնակչությունը յեղել է 100,000 հոգի: Դվինի ազգաբնակչությունը՝ 70.000—150.000 հոգի: Արծն քաղաքը նույնիսկ 300.000 !! վորից 150.000 ը 1049 թվին ջարդված... Համաձայն Սուրեացի պատմիչ Դընիի, արաբացիները Դվինը գրավելու ժամանակ 12.000 մարդ սպանել են և 35.000 հոգի գերի տարել: Ստ. Որբեկյանի հրատարակիչ՝ Շահնազարյանը (II, ծանոթ. 3, հջ 297/298), Սյունյաց Մմբատ իշխանի թագավոր լինելու առթիվ, հայ նախարարների միջև տերոջ անմիաբանությունը վերջաբույց հետո, (ի հարկե չէր կարելի սպասել նրանից, վոր հասկանար թե այդ յերևույթը ֆեոդալական շրջանի յուրահատուկ մի դրություն էր) հիմնվելով Մմբատ Գուռնատապալի և Ստ. Որբեկյանի տված տեղեկությունների վրա, պայմանական հաշիվներ կատարելով, գալիս է այն յեզրակացություն, վոր Բագրատունյաց հարստությունից դուրս գտնվող գավառների հայերը յեղել են 6 միլիոն ... Այսպիսի յեզրակացություն կարող է միայն ազգայնական սպեկուլացիայից առաջանալ:

Պրոֆ. Հակոբ Մանանդյանը (Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական շրջա-
նում, էջ 30) թեև Արծն քաղաքի ազգաբնակչության համար իր տված թիվի 300.000 հոգիի
մասին կասկած է հայտնում, այնուամենայնիվ թեքված է սրա մոտ մի թիվ ընդունելի, քանի վոր
նույն թիվը հավանական է գտնում նաև Անիի համար (էջ 90) և ավելացնում է. «ավելի քան
հավանական է, վոր այդ քաղաքներն իրանց բնակչության քանակով շատ ավելի մեծ են յե-
ղև, քան միջնադարյան յերուսաղեմը» (էջ 90)։ Մեր կարծիքով ֆեոդալական
Հայաստանի քաղաքների մասին հայտնված այս կարծիքը առաջանում է նրանց բարգավաճ-
ման գերազանատումից։

Բերված թվերի մասին հմտ. Թովմա Արժրուհի, III, Գլ. Իբ. էջ 231. Տարա-
րի, III, 4 ԿԿԳ, Յաքուս, VII, 179. Ն. Ման, «Արարատ» ամսագիր, № 6, 1911 էջ
482. Կետրինոս II, 518,9. Մատթի, Ուսահեցի, էջ 103. H. Topdschian, Polit. u.
Kirchng. u. s. w. էջ 170. Հակոբ Մանանդյան, Հայաստանի պատմությունը թուրք-
թաթարական շրջանում, Յերևան 1922, էջ 30, 90:

² U r h u m . l u u m h q k p m w g h , 97. d q . b 64.

Նույն պատմիչը ավելի վերջապես ասում է դաշտային, անպատասխան ազգաբնակչության դեպի քաղաքների խուժումը, յերբ նա պատմում է 1055 թ-ին Սելջուկ-թուրքերի Անիի վրա հարձակումը:

«Յորոց հինէ՛ մարդաբնակ տեղիքն փախուցեալ՝ ի քաղաքն Անի ժողովեցան, և ոչ ժամանեալ ամենեցուն մտանել, քանզի երեկոյացաւ ժամն և ածին զգրունս քաղաքին»¹։
Կարին քաղաքի 1241 թվին թաթարների կողմից զբաղեցրած առթիվ կիր. Գանձակեցի պատմիչը հաղորդում է.

«... և զի յոյժ բազմամբոխ էր քաղաքն ի ժամանակի յայնմիկ՝ լցեալ քրիստոնէիք և տաճկօք, և այլ ամենայն գաւառն անդր հաւաքեալ էր...»²։
Նույն պատմիչը թաթարների Կայան բերդի զբաղման առթիվ հայտնում է.

«... եկին և ամենայն բնակիչքն գաւառին ամրացան և նոքա շուրջ զբերդովն»³։

Մեր կարծիքով, նույն իմաստով պետք է հասկանալ Մատթ. Ուռահեցու այն վկայությունը, վոր վերաբերում է Արծն քաղաքի 1049 թ-ին զբաղման և ըստ այնմ գնահատել այս մասին պատմիչին հաղորդած թվական վկայությունը «Իբրև բիւր հնգետասան...»⁴։

Պատմական այս վկայություններից պարզ կերպով յերևում է, վոր նման աղետների ժամանակ քաղաքների ազգաբնակչություն ցույց տրված այդ թիվերը միայն այդ քաղաքների բնակչության չեն վերաբերում։ Ուստի, անքննադատորեն ոգտագործել այդ թիվերը և հարյուր հազարների հասնող ազգաբնակչություն ցույց տալ այդ քաղաքների համար վոչ թե չի համապատասխանում պատմական ճշտության, այլ և զուրկ է տնտեսական հիմունքներից։

Ավելորդ չէր լինի այստեղ մի քանի թիվեր բերել ֆեոդալական Յևրոպայի մի քանի քաղաքների ազգաբնակչության թիվի մասին։ 1500 թվին Գերմանիայի Դրեզդեն քաղաքը ունեցել է 4000 բնակիչ։ Միջնադարի վերջում Ֆրանքֆուրտ քաղաքը ունեցել է 10.000 բնակիչ⁵։ Ամենաշատ բնակչությունը յեղել է 25.000 հոգի։

Յեթե տնտեսական նման պատճառներ առաջ են բերում նմանորինակ յերևույթներ, և այդ այդպես է, ապա ֆեոդալական Հայաստանի քաղաքին հարյուր հազարների բնակչություն վերագրումը թե մեր առաջ բեղած պատմական վկայություններով և թե ֆեոդալական Յևրոպայի քաղաքների ցույց տված պատկերով, պարզվում է, վոր այդ հարյուր հազարներից

¹ Արիստ. Լաստ. Գլ. ԺԷ. էջ 73։

² Կիր. Գանձակեցի Գլ. ԼԲ. էջ 152։

³ Ibid, Գլ. ԻԴ. էջ 136։

⁴ Մատթ. Ուռահեցի, էջ 103։

⁵ Horst Jecht, Studien u. s. w. Vierteljahrsschrift f. Sozial. u. Wirtschaftsgeschichte XIX Bd. 1—3 Hft 1926, էջ 60/61։

շատ հազարներ պետք է կրճատել իրականության համապատասխան մի թիվի հասնելու համար։

Քաղաքների բնակչության քանակը անմիջականորեն կապված է այդ քաղաքի տարածության հետ։

Արար պատմիչ Իստախրին հաղորդում է, վոր Ատրեշյանի եմիրի նստած քաղաքը, Արդաբիլը 2/3 քառակուսի փարսախ¹ տարածություն ունեցել է։ «Դարբիլը = Դվին Արդաբիլից ավելի խոշոր էր»²։ Դևոնդի մոտ մոտավորապես 770 թ-ին Դվինը կոչվում է «լայնանիստ քաղաք»³։ Իստախրին Բարդավի մասին հաղորդում է. «անսովոր խոշոր քաղաք է. ավելի քան մի փարսախ յերկարություն և նույնքան լայնություն ունի»⁴։

Ֆեոդալական շրջանի քաղաքների տարածության մասին խոսելիս, պետք է նկատի ունենալ և այն հանգամանքը, վոր քաղաքներում խոշոր տեղ էին զբաղում պարտեզներն ու այգիները։

Համաձայն Պրոֆ. Ն. Մառի հետազոտությունների, Անիի ավերակները զբաղում են 150 դեսյատին⁵։

Դվինի և Անիի մասին այս վկայությունները գալիս են ապացուցելու, վոր ֆեոդալական Հայաստանի քաղաքների բնակչությունը չէր կարող հարյուր հազարների հասնել։

Առաջավոր Ասիայի քաղաքների մասին խոսելիս, մենք չպետք է մոռանանք մի եական հանգամանք։ Այդ քաղաքները այլազան ժամանակներում, նույնիսկ մի դարաշրջանում, ունեցել են տնտեսական բոլորովին այլ պատկեր։ Ուստի, մի վորևե քաղաքի մասին խոսելիս, առաջին հերթին պետք է ճշտել ժամանակը։

Այժմ մնում է մեզ պատասխանել այն հարցին թե քաղաքների բարգավաճումը ինչ ազդեցություն ունեցավ ֆեոդալական Հայաստանի հասարակական փոխհարաբերությունների վրա։

ա. Նախորդ գլխում, յեթե մենք խոսեցինք հողատիրական կենտրոնացման և այս յերևույթի արտադրող դասի վրա արած ազդեցության մասին, այնտեղ ցույց տվինք քաղաքների ֆեոդալների կողմից վերցված ծանր հարկերը, վորոնք ծանր կացության էին մատնում արտադրող գյուղացիությունը։ Նման տնտեսական պայմաններում, ամենայն հավանականությամբ, գյուղացության մի մասը ստիպված էր լինում գաղթել քաղաք, նույնիսկ անաշխատ սպառողների բաղմունքները կարիք ունենալ աշխատող ձեռքերի։

¹ Փարսախ, վորի հին հայկական ձևը հրասախ է, (հմտ. Hübschman, Altarmenische Gram. 183 № 357) պարսկական բառ է և ցույց է տալիս 3740 քայլ (Schritten) կամ 30 Stadien. Համաձայն Տոմաշևի (Zur hist. Topographie von Persien I 7, SBWA Bd. 102, էջ 149) փարսախը 6,123 մետր է։ Սրա մոտենում է Slovesch-ի արած հաշիվը 1 փարսախը = 6 բիլ. մ. (Revue du monde musulman Bd. 11, 1911 էջ 160)։ Համաձայն La grande Encyclopédie Սրբասյանների շրջանում 1 փարսախը = 4 բիլ. մ.։

² Իստախրի, Մարկվարտի թրգմ. (անտիպ) էջ \A\=\A\, \A\A.

³ Դևոնդ, Գլ. ԼԳ. էջ 141։

⁴ «Արարատ» ամսագիր, № 7, 1911 էջ 568.

«...կրօնաւորք թողուն զանապատս և զմենաստանս և յաշխարհի զբաղումս դեգերին և շրջին ընդ փողոցս և ի մէջ կանանց...»¹

Մի դար հետո ներսես Շնորհալին ստիպւած և լինում իր ընդհանրական թղթում ավելի դառնութեամբ խոսել այս մասին.

«Են ոմանք դարձեալ յաշխարհապէս և ի մեղէ կրօնաւորաց... անձամբ իսկ ընդ աշխարհականս բնակեն ի գիւղս և ի քաղաքս, և ի բանից բերանոյ գարշութիւնս և ի գործ վատթարութեան, և յորովայնամոլութիւնս անպատկառս, և յարբեցութիւնս անառակս, և յամենայն անկարգութեանց բերմունս առաւելուն քան զնոսա»²:

Յեկեղեցիի աշխարհականացման այս յերևույթը, վոր անմիջականորեն կապ ուներ ապրանքափոխանակութեան հետ, փողի սուր կարիք եր առաջացնում: Հոգևոր իշխանների աշխարհիկ պահանջները բազմաճանաչում էին: Հոգևորական դասը վորոնում և գտնում եր բազմաթիւ կերպեր քրիստոնեական հավատքը ապրանքավորելու և ստեղծելու դրամական միջոցներ: Հետաքրքիր է այս տեսակետից Աշոտ Հովհաննիսյանի մյուսոյն ապրանք դառնալու շուրջ կատարած ուսումնասիրութիւնը³:

Այս կերպ առաջանում է մի ուրիշ յերևույթ, վոր գալիս է, ավելի սաստկացնելու արդեն գոյութիւն ունեցող շահագործումների չափը:

Գ. Ֆեոդալական Յերոպայի քաղաքներում սոցիալական տեսակետից գոյութիւն ունեցող հակադրութիւնների մասին հետաքրքիր մի ուսումնասիրութիւն է մեր վերև հիշած Հորստ Յեխտի հետազոտութիւնը: Թվական տվյալներով նա կարողանում է ապացուցանել, վոր միջնադարյան Յերոպայի քաղաքներում չէ տիրել սոցիալական ներդաշնակութիւնը⁴:

Մեր կարծիքով, այլ չէր կարող լինել պատկերը ֆեոդալական Հայաստանի քաղաքներում, յերբ նկատի ունենանք այդ ազգաբնակչութեան պարզամունքները և սրանցից առաջացող նյութական հարստութեան տարբեր աստիճանները:

Վորոշ մարդկանց մոտ առևտրական և վաշխառական կապիտալի աշխուժացումով կուտակվող այդ հարստութիւնը իր հերթին մի այլ հակադրութիւն առաջացնում եր քաղաքի և գյուղի միջև: Մի հակադրութիւն, վոր իր արտահայտութեամբ, կարելի չէ ասել, ամենից ավելի քայքայիչն եր մանր գյուղացիական տնտեսութիւնների համար:

Սակայն, նախ քան այս հարցի քննութեանը անցնելը, հարկավոր է ծանոթանալ քաղաքի արհեստավորութեան հետ, վորպեսզի կարողանանք վորոշ չափով լրիւ պատկեր ստանալ քաղաքի երկ դարգացման մասին:

¹ Մատթ. Ուսման 53:

² Ներսես Շնորհալի, Ընդհանրական թուղթը. Յերուսաղեմ 1871, էջ 19:

³ Աշոտ Հովհաննիսյան, Եջմիածնի նվիրապետութեան շուրջը. «Խորհրդ. Հայաստան» Որաթերթ 1926 թ. սեպտ. 22/23 № 1568/1569:

⁴ Horstjecht, Studien u. s. w. Viertel. f. Soz. u. Wirt-gesch. Bd XIX, 1-3 Heft, 1926, էջ 48 հն:

II. ԱՐՇԵՍՏԱՎՈՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՖԵՈԴ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ֆեոդ. Հայաստանի արհեստավորական արտադրութիւնը պատմական տարբեր ժամանակաշրջաններում ունեցել է այլ ձևակերպում և բովանդակութիւն:

Յեթե սկզբնական շրջաններում նախանյութի վերամշակումով ինչպես արտադրական այլ բնագավառներում աշխատողները յեղել են հոգևոր և աշխարհիկ իշխանների վանքերում և դղյակներում ծառայողներ, նույնը չէ կարելի ասել ֆեոդալական այն շրջանի մասին, յերբ ստեղծվել եր քաղաքային կյանքը:

Վոր հոգևոր և աշխարհիկ իշխանների անմիջական կարիքներին բավարարող արհեստավորական մի դաս գոյութիւն ունեցել է վանքերում, մենք բավականանում ենք այստեղ մի վկայութիւն բերել 11-րդ դարուց.

«Այս բազմերջանիկ եպիսկոպոս (Տեր Հովհաննես)... զարգարեաց զՏաթև զանազան զարդուք... նաև յոգնապատիկ արհեստաւորօք»:

«...Այլ զամենայն շինուած վանացն այրեցին և քակեալ յատակեցին զգործատներն...»²)

Ստ. Որբեյանի այս վկայութիւնը, վորը վերաբերում է վանքերում գոյութիւն ունեցող արհեստավորների և գործատուների, շարունակութիւնն է անշուշտ այն դրութեան, վոր գոյութիւն է ունեցել ավելի մեծ չափերով նախորդ դարերում: Յեթե սկզբնական շրջանում ախրապետող եր հանդիսանում այս դրութիւնը, ապա հետագա դարերում արտադրական աշխատանքի մեջ առաջացած բաժանումը, սպառողների մեծ չափով քաղաքներում կենտրոնացումը, ապրանքափոխանակութեան շրջանի հատուկ տնտեսական կարիքների բազմազանութիւնը առաջ էին բերում արտադրութեան այս ասպարեզում աշխատանքի մի նոր կազմակերպութիւն, վոր իր հերթին անմիջականորեն անդրադառնում եր ազգաբնակչութեան սոցիալական շերտավորման վրա:

Մասնավորաբար, քաղաքներում առաջացած այս փոփոխութեան կողքին դեռ ևս շարունակվում էին գյուղական տնտեսութիւններում արտադրութեան ասպարեզում տնայնագործական այն ձևը, վորին հանդիպում ենք մինչև մեր օրերը: Մյուս կողմից քաղաքների այն տեսակները, վորոնք նախորդ գլխում անվանեցինք յերկրագործական քաղաքներ, ըստ ինքյան հասկանալի չէ, վոր նման քաղաքներում առաջացած այս փոփոխութիւնը խոշոր անդրադարձում չէր կարող ունենալ նրանց ազգաբնակչութեան սոցիալական շերտավորման վրա: Հիմնական փոփոխութիւնը

¹ Տես սկիզբը Տեղեկագրի 2-րդ համարում:

² Ստ. Որբեյան, II, գլ. 3-րդ. էջ 55-56, 57:

առաջանում եր այն քաղաքներում, վոր մենք անվանեցինք արհեստավորական-առևտրական:

Արտադրական աշխատանքի մեջ առաջացած այս փոփոխությունը ինչպե՞ս եր կայանում:

Ֆեոդ. Հայաստանի սպարանքափոխականությունը շրջանում առաջանում եր ազգաբնակչության մեջ մի շերտ, վոր բացառաբար պարապում եր նյութի վերամշակումով (և այլ կարգի շինություններով) և վոր զլխավորն եր արտադրական աշխատանքը նոր կազմակերպություն եր ստանում և արտադրական միջոցների սեփականատիրական նոր փոխ-հարաբերություններ եյին ստեղծվում:

Առաջ եր գալիս արհեստավորական դասը:

Այստեղ մեզ հետաքրքրում են հետևյալ հիմնական հարցերը.

ա. Ի՞նչ տեսակի արհեստներ գոյություն ունեյին.

բ. Ի՞նչ աստիճանի վրա յեր գտնվում արտադրողականությունը.

գ. Ո՞րն համար եր արտադրում արհեստավորը և ի՞նչ չափով կապված եր շուկայի հետ:

դ. Ի՞նչ եր ներկայացնում իրենից արհեստավորական դասը սոցիալական տեսակետից.

Այս հարցերի պատասխանները մեծ չափով կապված են այն պնդումների հետ, վորոնք կատարվելու յեն Ֆեոդ. Հայաստանի քաղաքներում: Ընդհանրապես, այն պնդումները, վոր մինչև այժմ կատարված են, շատ քիչ են այս հարցերին լիակատար պատասխան տալուց: Սակայն, մենք կարծում ենք, վոր թե մատենագրական վկայություններում և թե կատարված մասնակի այդ պնդումներից մենք ունենք այնպիսի փաստեր, վորոնք մեզ հնարավորություն կտան, իր ընդհանուր գծերով, բնութագրելու արհեստավորական արտադրությունը:

ա) Յերը 1064 թվին Անին Սելջուկ-թուրքերի կողմից զրավվում ե, քաղաքի «արուեստագետները» գերի են տարվում:¹⁾ Նույն պատմիչի մոտ 1254 թ. ի մասին մենք ունենք հետևյալ ուշադրավ վկայությունը: Սուրբ վերաբերում ե թաթարների կողմից զրված հարկերին.

«...Այլ և զամենայն արուեստագետս եթէ ի քաղաքս և եթէ ի գիւղս՝ զամենայն ի հարկի կացուցին. այլ և ծովակս և զլիճս ձկնորսաց, և զերկաթահանս՝ և զգարբինս և զշապարարս և զլ՝ պետոյ է մասնաբար ասել... և զամենայն աղահանսն առին որ ի կողբ, և յոր այլ կողմանս: Նաև ի վաճառականացն բազում ինչ ուսեալ և շահեալ, կուտեցին բազում դանձս ոսկոյ և արծաթոյ և ականց պատուականաց»:²⁾

Կիրակոս Գանձակեցու այս վկայությունը վոչ միայն նախանյութի վերամշակման տեսակետից ուշադրավ ե, այլ և բնական հարստությունների

1) Կիր. Գանձակեցի, զլ. իե. եջ 139:

2) Ibid, զլ. ԾԷ. եջ 210:

շահագործման և առևտրական կապիտալի մասին մի հետաքրքիր փաստ ե:

Դարերինները և ներկարարները հիշատակելուց հետո, պատմիչը պետք է ի տեսնում մանրամասն տալ գոյություն ունեցող արհեստավորների ցուցակը. «զլ՝ պետոյ է մասնաբար ասել»:

Յեթե արտադրության սուբյեկտների, արհեստավորների, մասին նույնք մանրամասն տեղեկություններ, ապա ունենք նրանց արտադրությունների, որյեկտների, մասին մի շարք վկայություններ, վորոնք անմիջական փաստեր են նրանց արտադրողների մասին:

Իստախրի և Իբն Հաուքալ արար պատմիչներից իմանում ենք, վոր Դվին քաղաքը իր հյուսվածեղեններով նշանավոր եր¹⁾: Նրա այսպես կոչված մարիցի հագուստները և կերպաները (այժի մազից կամ աղնիվ բրդից պատրաստված), ինչպես նաև գորգերը, բազմոցները, քողերը, վարագույրները մեծ համբավ եյին վաճելում: Մայաֆարիքինին հայտնի յեր իր անձնուցներով:

Անիում գտնվել են մետաքսե, ասեղնագործված հագուստներ, քողեր և գոտիներ, վորոնք իրենց թանկարժեք և նուրբ աշխատանքով զարմանք են առաջ բերում²⁾:

Մարքո Պոլոն իր հայտնի գրքի XX-րդ գլխում խոսելով Թուրքմենիայի մասին (այժմյան Թուրքիան), մեզ տալիս ե այնտեղ բնակող հայերի մասին շահեկան վկայություններ: Նրանք պարապում են «առևտուրով և արուեստներով» ասում և շինում են ամենանուրբ և աշխարհի ամենագեղեցիկ գորգերը: Գործում են ճուխ և բազմազույն մետաքսյա կերպաներ: Պատմիչը ավելացնում ե. «և բավականին ուրիշ բաներ ևս»:³⁾ Կիրակոս Գանձակեցիի նման կարճ ե կապում:

Մարքո Պոլոյի այս վկայությունները, մեր կարծիքով, շարունակություն են այն զրույթյան, վոր յերկու դար առաջ ֆեոդ. Հայաստանում գոյություն ունեյին և քաղաքական այլազան ղեկավարների բերումով, մասնա-

1) Իբն Հաուքալ, եջ ԿԶ. Խոսախրի, եջ 111. Cheref-Ouddine I, եջ 172.

2) Ն. Մառ, Անիի ավերակները. «Արարատ» ամսագիր № 8 1911 թ. եջ 659.

3) «... Et les autres gens sont Hermins et Grecs (Arméniens et Grecs) qui mellèlement (d'une manière mêlée) demeurent avec eux (Turquemens) en villes et en châteaux, et vivent de marchandise et d'ars (arts), car il labourent (travaillent) les plus fins tapis et les plus beaux de monde. Encore il labourent draps de soie de diverses couleurs moult beaux et moult riches, en moult grand quantité, et d'autres choses assez. Le livre de Marco Polo par M. G. Pauthier, Paris 1865: I, Ch. XX, -ի. 35—37. Մարքո Պոլոյի Թուրքիայի հայերի մասին տված տեղեկությունը հաստատվում ե նաև ուրիշ մի ճանապարհորդի կողմից, 13-րդ դարի 50-ական թվականներին. De la Turquie, vous saurez que la dixième partie des habitants n'est pas sarrazine, presque tous sont Arméniens et Grecs. Guillaume de Rubrouck, Récit de son voyage, Paris 1877 p. 294—95.

վորարար քաղաքի աղգարանակութիւնը գաղթում եր Հայաստանից դուրս իր հետ տանելով իր արհեստները:

14-րդ դարի առաջին կիսում առաջավոր—Ասիայում ճանապարհորդութիւն կատարած Իբն-Բատուտայից իմանում ենք, վոր Երզնկա քաղաքը այդ ժամանակաշրջանում անվանի յե յեղել իր կերպասներով, վորոնք իր անունով կոչվելիս են յեղել:¹⁾

Բերված այս վկայութիւնները ցույց են տալիս վորոշակի թե Հայաստանը հյուսիսային ասպարեզում խոշոր դեր կատարել է:

Հյուսիսային հետ սերտ աղբյուրութիւն ունեցող ներկարարութիւնը նույն համեմատութիւնը գտնվել է ծաղկած վիճակում: Դվին պատրաստված «քիւմիկ» ներկը արաբ պատմիչների կողմից քանիցս գովասանքի առարկա է դարձել:

Դվինից մի քանի քիւ. մ. հեռավորութիւն վրա գտնվող Արտաշատը, իր ներկարաններով այնքան եր նշանավոր, վոր Բալատուրին կոչել է «կարմիր գույնի գյուղ» (qarja elqirmiz):²⁾ Համաձայն Իբն Ֆաքրիի Հայաստամում կար նաև Rubia tinctorium:³⁾ Կիր. Գանձակեցիի մոտ հիշատակված «շալարարները» այն արհեստավորներն էին, վորոնց զբաղմունքն եր կերպասները ներկել:

Կիր. Գանձակեցին մեզ խոսում է վորոշակի դարբինների և յերկաթահանքերի գոյութիւն մասին: Մետաղագործութիւն ասպարեզում ունենք նույնպես բավականին հետաքրքիր վկայութիւններ, վորոնք ցույց են տալիս արհեստավորական այս ճյուղի բավականին առաջացած վիճակը:

Յերբ 8-րդ դարու յերկրորդ կիսում Արտավազդ Մամիկոնյանը արարների դեմ ապստամբութիւն եր սարքում, գնում է Դվին մայրաքաղաքը.

«...և ստանայր անդ զէնս և անօթս (զանօթս) պատերազմի, և վառէր զինքն զրահիւք և սաղավարտիւք և ամենայն սպառազինութեամբ...»⁴⁾

Նկատի ունենալով մետաղագործութիւն առաջացած վիճակը, մենք հիմք ունենք ընդունելու, վոր Արտավազդ Մամիկոնյանի գնած այս զենքերը Դվինում պատրաստվել են:

¹⁾ «...Arzendjan possède des marchés bien disposés, on y fabrique des belles étoffes, qui sont appelées de son nom». Voyage d'Ibn Batoutah (1325—1349 թթ.) T. II, p. 294, Paris 1854. հմտ. նաև Marco Poio, ch. XXI, p. 37—38.

²⁾ Բալագուրի, I հջ ԿԱ. հմտ. H. Topdschian, Die Innere Zustände հջ 46.

³⁾ Իբն Ֆաքրի, հջ ԿԱ. գորգաշինութիւն և քիւմիկ ներկի մասին հմտ. նաև Fr. Stüwe, Die Handelszüge der Araber unter den Abbassiden. Berlin 1836, հջ 184.

⁴⁾ Ղեկունգ, գլ. ԼԴ. հջ 138.

Ն. Մառի Անիում կատարած հետախուզութիւնները ցույց են տվել, վոր պղինձի ձուլարաններ գոյութիւն ունեցել են:¹⁾

Պղնձահանքերի շահագործութիւն մասին 1247 թ.-ի Զուխտակ վանքի արձանագրութիւն մեջ ունենք հետևյալ վկայութիւնը.

«Կամաւն Այ (ես) տեր Յորդանան շինեցի զեկեղեցիս ի թվին Ողղ (1247 թ.) իշխանութեամբ Աւագին ողորմութեամբ և տաւք Պղնձահանացն Աստուածածնի...»²⁾

Վերև հիշած Իբն Բատուտայ ճանապարհորդից տեղեկանում ենք, վոր Երզնկայում եղել են պղնձի հանքեր, վորից պատրաստելիս են յեղել անոթներ և ժամանակի լամբարները:³⁾

Մետաղագործութիւն մի ճյուղն եր կազմում նաև վոսկերչութիւնը, վոր Հայաստանում հասել եր զարգացման բարձր աստիճանին:⁴⁾

Ն. Մառը պղնձի ձուլարանների մասին խոսելիս, հայտնում է նաև, վոր Անիում գոյութիւն ունեցել են աղյուս և անոթների պատրաստելու գործարաններ:⁵⁾ Պետական թանգարանի Անիի բաժնում ցուցադրված անոթները մի մի հուշարձաններ են այս մասին:

Աղյուսի պատրաստութիւնը սերտորեն կապված է շենքերի շինութիւն հետ: Մինչև մեր որերը կանգուն է քայքայված յեկեղեցիները, վանքերը, բերդերն ու պարիսպները մի մի կենդանի կոթողներ են այս բնագավառում ձեռք բերված հաջողութիւնների մասին:⁶⁾ Շարցկովսկին, վոր

¹⁾ Ն. Մառ, Անիի ավերակները «Արարատ» № 8, 1911 թ. հջ 660—62. քաղաքի արդյունաբերութիւն զարգացման մասին հմտ. նաև I. Орбели, «Развалины Ани» „Нева“ ամսագրում № 5, 1911 հջ 440—41:

²⁾ Կ. Կոստանյանց, Վիճական Տարեգիր հջ 92:

³⁾ Voyages d'Ibn Batoutah, trad. fr. par C. Defreméry p. 294 „...Il y a des mines de cuivre avec lequel on fabrique des vases, ainsi que les baïcons“. 263—64 հջի վրա „baïcon“ բառի մասին հետևյալ բացատրութիւնն է տալիս. „On appelle ainsi une espèce de colonne ou candélabre de cuivre porté sur trois pieds, à son extrémité supérieure il a une sorte de lampe, aussi de cuivre, au milieu de laquelle il y a un tuyau pour la mèche. Cette lampe est remplie de graisse fondue, et on place à côté des vases de cuivre, pleins de graisse, et dans lesquels se trouvent des ciseaux pour arranger les mèches“.

⁴⁾ H. Topdschian, Die Innere Zustände հջ 45—46. I. Mourier, L'art religieux au Caucasse. 1887. «Հանդէս ամսորեա», II 1888 հջ 49—50:

⁵⁾ Ն. Մառ, Անիի ավերակները, «Արարատ» ամսագիր № 8 1911 թ. հջ 660—62:

⁶⁾ Յերկրաչափական դիտելիքների ասպարեզում ձեռք բերված փորձառութիւն մասին արժե հիշատակել Տաթևի յեկեղեցիի մոտ գտնվող սյունը. «...Սհա զայս իսկ աւարտեալ զամս մետասան՝ կանգնէ և մերձ եկեղեցւոյն հանդէպ զրանն հարաւոյ սիւն մի զարմանալի յանուն սրբոյ Երրորդութիւնն ի մանր քարանց պատուածեալ ի չափ 30 կանգնոյ»: Աս. Որբիյանց, յ. գլ. ԽԱ. հջ 270: Այդ սյունի մասին Բրոսէն գրում է. „Cette colonne qui s'ébranle quand on s'appuie dessus, subsiste encore: elle a été vue par Chalmaziantz et par M. Abich qui n'a pu m'en expliquer le mécanisme“, Broset, I, p. 134 note 7. Histoire de la Sinie, հմտ. այդ սյունի մասին նաև Թաւ-Օաւյանց, Մխիթար Գոշի գատաստանագիրը հջ 92 ծանոթ. 162:

հայկական ճարտարապետության յերկու հատոր մի ընդարձակ ուսումնասիրություն և նվիրել, նույնիսկ գալիս և այն յինթադրություն, վոր առևմտյան Յեվրոպայի վերածնունդի ճարտարապետական վոճը նախ Հայաստանում և դարգացել¹⁾

Ասողիկ պատմիչը մեզ հայտնում և, վոր 989 թ.-ին Կոստանտնուպոլսում պատահած յերկրաշարժի պատճառով կործանած Սուրբ տաճարի վերակառուցման որինակը տալիս և մի հայ ճարտարապետ Տրդատ անունով.

«Այլ անդ զիսկալ ճարտարապետին հայոց Տրդատայ քարագործի՝ տայ զօրինակ շինուածոյն, իմաստուն հանձարով պատրաստեալ զկաղապարս կազմածոյն և սկզբնաւորեալ զշինելն. որ և զեղեցկապէս շինեցաւ պայծառ քան զառաջինն»²⁾

Վասպարականում Գագիկ I-ի որով կատարված շինարարությունների նկարագրությունները վորոշակի ցույց են տալիս այս ասպարեզում ձեռք բերված հաջողությունները³⁾

Շինարարական ասպարեզում հեշատակություն արժանի են ջրասակավ Հայաստանում վոռոգման ասպարեզում կանալների ցանցը՝ Շատ վաղ ժամանակներից հանդիպում ենք այս բնագավառում արտադրված և մինչև մեր օրերը պահված մնացորդներին⁴⁾ 10-րդ դարուն վերաբերող վկայություններ ունենք այս մասին Ս. Որբելյանի մոտ⁵⁾ Հետագա դարերի մասին կան նաև այլ վկայություններ⁶⁾

Շինարարության ասպարեզում կատարված այս աշխատանքները սերտորեն կապված էին փայտի վերամշակման ասպարեզում գոյություն ունեցող արհեստների զարգացման հետ։ Հովհաննես Կաթողիկոսի մոտ հիշատակված «հյուսանաց մամուլ» և թովմա Արծրունիի մոտ գործ ածված «հյուսանական զործեաց» բառերը ցույց են տալիս հյուսնություն գոյությունը⁷⁾

1) Strzygowski, Die Baukunst d. Armenier in Europa 2 Bde. Vion 1918.

2) Ասողիկ, III, գլ. ԻԷ, էջ 251.

3) Թովմա Արծրունի, III, գլ. ԻԹ, էջ 252 շար.

4) Հայաստանի կանալիզացիայի մասին հմտ. W. Belck, Z.f. Ethnologie 31 Bd. 1899, S. 237. հեղինակը հետաքրքիր տեղեկություններ և տալիս խաղական ժամանակի վերաբերյալ Վան, Բերկրի, Բայազետ քաղաքների վոռոգման ցանցի մասին։ Կանալիզացիայի տեխնիկայի մասին հմտ. նույն հեղինակի հոգվածը Jahrb. Frankf. Vergl. f. geographie u. Statistik. s. 64-65. S. 127-37.

Վերջին ժամանակներս պեղումների ընթացքում Արագած լեռան շրջանում հայտնաբերված վոռոգման ցանցի մասին տես Ս. Քալաճրաբի հոգվածը «Նորք» ամսագրում № 5-6, էջ 207-232:

5) Ս. Որբելյան, գլ. 48, գլ. 49:

6) Միքիթա Սյրեվանցի, էջ 58 Մոսկվա 1860. Վիսական Տարեգիր էջ 39 և 164:

7) Հովհ. Կաթ. գլ. ԽԹ, էջ 300. Թ. Արծրունի, III, գլ. ԻԹ, էջ 256:

Սուրբաղի պատմիչ Դրնիի մոտ ունենք ավելի վորոշ տեղեկություններ, վորոնք ավելի նախորդ դարերին են վերաբերում և ցույց են տալիս միաժամանակ հյուսնության արհեստի վորոշ զարգացման աստիճանը, Կամախի պաշարման ժամանակ պատմիչը հաղորդում և, վոր Արբասը հրամայում և հայ սայլապաններին մայրի փայտ բերել և հրամայում և հյուսներին մեքենաներ շինել. այդ մեքենաները գործ և ածում ամբողջունը քանդելու¹⁾

Բացի շինարարական և պատերազմական ասպարեզներից, հյուսները զբաղվում էին փոխադրական միջոցներ կառուցելու թե ցամաքի և թե լիճերի վրա։ Յամաքի վրա սայլերն էին, իսկ լճերի վրա նավեր։ Լիճերի վրա կատարված նավագնացության մասին ուշագրավ վկայություններ ունենք թե թովմայի պատմությունը շարունակողի և թե Հովհ. Կաթողիկոսի մոտ. այդ վկայությունները վերաբերում են Վանի և Սևանի լիճերի մասին.

«...Բաղում նաւաց յօրինեալ (Գագիկ I Արծրունի) խաղաղ և անբոյթ նաւահանգիստ»²⁾

«Եւ ապա նաւակառոյց լիալք սրավար թիակօք իրր ի տապանի ինչ երթեալ զօղեալ ամբանային ի Սևան կղզւոջ...»³⁾

Գետերի վրա կատարված նավարկության մասին Վիսական Տարեգրի արձանագրություններում կան ուշագրավ վկայություններ⁴⁾

Այս բոլորը ասպարեզանում են, վոր հյուսնությունը պետք և լինել բավականին զարգացած աստիճանի վրա։ Յեվ այս հասկանալի յե միանգամայն այն հիմնական պատճառով, վոր փայտը տնտեսության այս ֆազում կազմում էր հիմնական նախանյութը:

Այս կերպ տեսնում ենք, վոր մասնավորաբար քաղաքների ազգաբնակչության վորոշ մասը վորպես արհեստավորներ միայն պարապել են նախանյութի վերամշակությամբ և կամ շինարարական ասպարեզներում։ Վերև ասածներից պարզ կերպով հետևում և, վոր Ֆեոդ. Հայաստանում բացառաբար զարգացել են հյուսնական, մետաղագործական և ճարտարապետական ճյուղերը։ Վերին աստիճանի հետաքրքրական էր իմանալ թե այդ արհեստավորական ճյուղերը ինչպիսի ստորաբաժանումներ և մասնագիտականացումներ ունեցել են։ Արհեստների զարգացման չափը իմանալու տեսակետից այս հանգամանքի պարզաբանումը ունի խոշոր նշանակություն։ Մինչ այժմյան փաստերը հնարավորություն չեն տալիս այդ յերևան հանել:

Ինչ վերաբերում և բնական հարստությունների շահագործման, կասկածից դուրս և արծաթահանքերի, պղնձահանքերի և երկաթահանքերի գո-

1) IV-me partie de Chronique de Denys de Tel Mahré, էջ 74:

2) Թովմա Արծրունի, IV, գլ. Է, էջ 294. հմտ. նաև III, գլ. ԻԹ, էջ 257:

3) Հովհ. Կաթողիկոս, գլ. ԽԷ, էջ 287, գլ. ԿԷ. ըջ 444:

4) «...Ինչհարկը ի Կարբին գետերէն և նաւերէն...» և կամ «...եկի ի սուրբ ուխտս, ետու Շամեա ջաղացներն, երասխի նաւն,...» Վիս. Տարեգիր, էջ 6, 8:

յուլիոսը: Սրանց կողքին պետք է հատկապես հիշատակել ադահանքերի շահագործումը, վորոնցով այնքան հարուստ է յեղել Հայաստանը¹⁾

Արտադրութեան այս ճյուղը ի՞նչ չափով եր զարգացել է կամ ազգաբնակչութեան վճար մասն եր ընդգրկում, առայժմ հնարավորութեան չունենք այս մասին վճար ուղղակի է վճար անուղղակի ճանապարհներով վորոշ յեզրուակացութեանների հանգեցում: Սակայն, տրված լինելով տեխնիկայի համեմատաբար ցածր աստիճանը կասկած չի կարող լինել այն մասին, վոր հանքային այս շահագործումները գտնվում էյին նախնական աստիճանի վրա: Իսկ այդ հանքերի շահագործումը տեխնիկայի զարգացման այդ աստիճանի վրա հնարավոր եր միայն արտադրական աշխատանքի ստրկացումով²⁾

Դրնիսի մոտ ունենք ուշագրավ վկայութեան որավարձով աշխատող դաշտային բանվորների մասին, վորից պարզ յերևում է այն սոսկալի կեղեքումը, վոր տեղի յե ունեցել Միջագետքում 8 ըզ դարի յերկրորդ կեսին:

«Նրանք (կալվածատերերը), ասում է պատմիչը, որավարձ տալիս էյին 5 որդի³⁾, կամ, ամենաշատը տասը: Այսպես հնձել տվին իրենց առատ հունձքը՝ առանց խղճալու այդ դժբախտների ուժերին, նույնիսկ հագնալու չափ չոր հաց չեյին տալիս, վոչ թե նվազ ունենալուն համար, այլ՝ նրա համար վոր չար կամեցողութեան ունեյին⁴⁾»:

Ուստի, արտադրութեան ասպարեզում ամենից կեղեքվածները հանդիսանում են նրանք, ովքեր զուրկ լինելով արտադրական միջոցներից, ստիպված էյին լուր իրենց աշխատանքի ուժով ապրելու:

Վերև մենք ասացինք, վոր հնարավորութեան չունենք առանձին արհեստների մեջ առաջացած մասնագիտականացումը—արտադրական ուժերի զարգացման չափը—յերևան հանել: Յեթե ուղղակի վկայութեաններ մեզ հնարավորութեան չեն տալիս այդ անել, արդյոք մի ուրիշ անուղղակի ճանապարհով հնարավոր չե՞ր արդյոք այդ մասին մի ընդհանուր գաղափար կազմել:

բ) Աշխատանքի արտադրողականութեանը անմիջականորեն կախյալ է արտադրական ուժերի զարգացման չափից: Ուստի, յեթե կարողանանք աշխատանքի արտադրողականութեան մասին մի բան ասել, այն ժամանակ հնարավոր կլինի յերկրորդ անձանոթը վորոշ չափով հայտնաբերել:

1) H. Topdschian, Die Innere Zustände հջ 45.

2) Այդ ստրկացումը է գործ զրված կեղեքումները անասելի չափերի էյին հասնում, յերբ հանքատերերը արտադրութի մեջ տեղում էյին անմիջական փոխանակական արժեքը զրամի ձևով: Հմտ. այս մասին K. Marx, Das Kapital, III, գլ. 8, հջ 185.

3) Որովի 8-րդ դարում ունեցած արժեքի մասին ձեռքի տակ տվյալներ չունենք: Հայտնի է սակայն վոր հին Հունաստանում յեղել է փոքր յերկաթյա կամ պղնձյա զրամ է արժել է 6 որդի=1 զրամ, 13-18 ֆենիգ արժողութեամբ: Ծանրութեանը տատանվել է 0,7-1 զրամի միջև:

Սակայն, հետագայում Սուրբայի և Յեզիպոսի թագավորների կողմից յերբ զրամին կեղծվել է, անտարակույս որով ևս կորցրած պիտի լինել իր հին արժեքը: 1833 թ.-ի Հունաստանում կիրառված զրամական չափերի հիման վրա 1 որդի արժեք 0,036 մարկ: Հմտ. Brockenhau-ը:

4) VI ieme partie Chronique de Denys de Tel-Mahré, հջ 182—183.

Ապրանքափոխանակութեան շրջանում աշխատանքի քանակական և վորակական արտադրողականութեանը ուղղակի արտահայտվում է արտադրութեան պրոցեսի տեղութեամբ և անուղղակի՝ արտադրութեամբ ապրանքի շուկայում ունեցած գինով:

Ուստի մեզ հարկավոր է՝

1) Պատմական փաստերով ցույց տալ թե արտադրական պրոցեսը վճար է տեղի:

2) Արտադրութեամբ ապրանքը ի՞նչ գինով է գնահատվել:

Մեր կարծիքով այս է այն ուղին, վորով պետք է ընթանանք ուղղակի վկայութեանների բացակայութեան դեպքում:

1) Արտադրական պրոցեսի տեղութեան մասին ունենք բավականին առատ տեղեկութեաններ ճարտարապետական կառուցումների ասպարիզում: Յերբ նկատի ունենանք այն համագամանքը, վոր նման կառուցումներ տարբեր ճյուղերի արհեստավորների համադրական արտադրութեան է, այն ժամանակ մի յեկեղեցիի կամ վանքի շինութեան արտադրական պրոցեսի տեղութեան մասին մի վկայութեան մեզ վորոշ չափով գաղափար կըտա մի շարք արհեստների մասին:

Հայտնի Տաթևի յեկեղեցիի շինութեան սկսվում է 895 թվին և ավարտվում է 906 թ.-ին¹⁾ Ուրեմն գործ է զրվում 11 տարվան մի ժամանակահատվածում:

1029 թ.-ի Մարմաշենի արձանագրութեանից տեղեկանում ենք, վոր այդ վայրում յեկեղեցին կառուցվում է 43 տարվան ընթացքում²⁾

Զալալ Դովալ Հասանի 1240 թ.-ին թողած մի արձանագրութեանից իմանում ենք, վոր Գանձասարի յեկեղեցիի շինութեան վրա զրվում է 22 տարի³⁾

Անշուշտ արտադրութեան պրոցեսի այս յերկար տեղութեան վրա կարող էյին ազդել և քաղաքական արտաքին պատճառներ:

Արտադրական պրոցեսի տեղութեան մասին ունենք հետաքրքիր վկայութեաններ գրքի արտադրութեան մասին:

Մի աստվածաշնչի 1330 թ.-ի հիշատակարանում կարդում ենք.

«... Զսա սկսեալ ի դեկտեմբերի աւարտեցաւ ի հոկտեմբերի, ի ձեռն երկու քաջ քարտուղարի»: ⁴⁾

Ուրեմն, յերկու «քաջ քարտուղարներ» կարողանում են 10 ամսվա ընթացքում մի աստվածաշնչի արտադրել: Իսկ այդ աստվածաշնչի կազմութեան համար 40 որ հարկավոր է լինում:

1314 թ. մի գիրք արտադրողի հիշատակարանը հետաքրքիր է այն տեսակետից, վոր այնտեղ պարզվում են այն պայմանները, վորոնց մեջ տեղի է ունեցել այդ արտադրութեանը: Մեր կարծիքով, այս վկայութեանը

1) Ս. ՈՐԵԽԱՆ. I. գլ. իս. հջ. 270, 269 և գլ. ԽԳ. հջ 1280.

2) Կ. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ. Վիժական տարեգիրք. հջ 16/17.

3) ibid հջ 81/82. այս եկեղեցիի շինութեան մասին կիր. Գանձակեցիի մոտ կարդում ենք. «...և յոլով ամս աշխատեն ի նմա». գլ. ԻԹ. հջ. 146.

4) Ղ. ԱՆԻՍՅԱՆ. Հայապատում հջ 547

ժամանակի մի սլարազա չե այդ ժամանակների արտադրական պայմանների համար: Այդ հիշատակարանում կարդում ենք՝

« . . . Տես թե քանի աշխատեցայ
 Ես Մխիթար գրիչ սորա,
 Թուղթիս անկող ու գրիչ չկայ,
 Աւուրքըս ցուրտ ու պարզկա,
 Զարգախոս բարձր ու կրակ չկայ
 Դոնիրս չոր ու սպաս չկա,
 Եւ այս Գլաճորն ճիլ գիտենայ,
 Ես յոյժ նեղած ու ճար չկայ»։ ¹⁾

Արհեստավորական ձևը արտադրության մեջ առաջացրել է տնտեսա-
կան այն վոգին, վոր վարպետը ապրում էր իր արտադրույթի հետ: Այդ
արտադրույթը ավելի իր ստեղծագործությունն էր և յերբ արտադրու-
թյան վորակական արժեքն էր գերակշռում, այն ժամանակ մի ամբողջ
մարդկային սերունդ, արտադրական ամենաանհպատ պայմաններում, դործ
էր դրվում նման արտադրության լրա: Ահա թե ինչով պետք է լրացա-
տրել ֆեոդալական Հայաստանից մեզ հասած վանքերի կամ ցեղեղեցիների
հիացմունք պատճառող զարդարուն քաչե խոյակների և ձեռակերտ փայտե
քանդակների այդ կերպ արտադրության պատճառը: Իսկ այս բոլորն յեթե
ավելացնենք վարպետին պատվո նախանձախնդրությունը (արդյունք ար-
տադրության արհեստավորական ձևին), այն ժամանակ մեզ համար պարզ
կլլինի արտադրության պրոցեսսի այդ անհավատալի լինելու հավ տևողու-
թյունը:

Թեև արհեստավորական այլ ճյուղերի արտադրական պլոցեսսի առողջութեան մասին պատմական վկայութիւններ չունենք, սակայն մեր կարծիքով, նկատի ունենալով ներքին ապրանքափոխանակութեան զարգացման այն աստիճանը, վորի մեջ գտնվում եր ֆեոդալական Հայաստանը, դժվար թե արտադրական այլ ճյուղերում տարբեր պատկեր լիներ:

2. Ֆեոդալական Հայաստանի ապրանքների գիների հայտնաբերումը գեո ևս կարող է հատուկ ուսումնասիրությունների: Այսպիսի մի աշխատություն կը լուսաբաներ վոչ միայն մեր առաջադրած հարցը, այլ և կը պարզեր աշխատավարձի խնդիրը, վոր մեզ հնարավորություն կը տար աշխատավոր դասի սոցիալական գրությունը պարզելու:

Առ այժմ մենք բավականաճառ եմք տալ մի քանի որոնականեր այս մասին:

Համաձայն իբն Հառաքալի վկայության, հայկական զոտինները արժեկ են 1-10 դինար: ¹⁾ Ուրեմն ժի զոտիի գինը տատանվում էր 11,66-116,60 մարկի սահմաններում:

1253 Թ-ի Հաղբատի աղձանագրության մեջ կարդում ենք.

«... ես Շնորհաւոր Տփլիսեցիի .. միաբանեցաք Հաղբաղոյ Սր.
Նշանիս և տուաք հարիւր դահեկան ի շինութեան ժամատան...» 2)

¹⁾ Ղ. Ալիբեկ, Հայաստանում հշ 526

2) Կ. Կոստանյանց, Վիմակա՛ն Տարեգիր ԿՁ 98.

Մի հայ վանականի գնահատման վրա թաթարներին Մանգու խանը
1254 թ.-ին քանդված մի յեկեղեցիի վերաշինության համար նվիրում է
200 յաքք:

«... Մանգուլն հարցրեց հետո նրան (հայ վանականին) թե ինչ գնով պիտի կարողանար այդ (յեկեղեցին) վերաշինել. ան պատասխանեց թե 200 յառքոյի, այսինքն՝ 2000 մարքի»։¹⁾

Գրքի արտադրութեան ասպարիզում գտնուում ենք հետևյալ վկայու-
թյունը, փոր 1330 թ.-ին և վերաբերում:

«Բայց խարճ66 որ եղև ալս աստվածաշունչ²⁾ զրոցս՝ ընդ ամհնայն միահամուռ 2200 զբամ է:

Ապրանքների գնորդ վորոշելու ժամանակ, ինչպես տեսնում ենք, մեծ կարեւորութիւն է ներկայացնում խնդրո առարկա ժամանակաշրջանում գրածի արժեքի ճշտութիւնը: Մի հարց, վոր դեռ ևս հաստուկ ուսումնասիրութեան կը կարոտի: Մի կողմից ուղղակի վկայութիւնների բավարար չափով գոյութիւն չունանալը. մյուս կողմից գրամական արժեքների ճշտված չլինելու պարագան, մեզ հնարավորութիւն չեն տալիս ապրանքների գրենքի մասին իրական գաղափար կազմել: ³⁾

Սակայն, կարելի է ասել, վոր արհեստավորական արտադրության ապագայիցում, տրված լինելով նյութի թանգությունը և արտադրական պրոցեսի յերկար. տեղությունը, արհեստավորական ապրանքների գիները անցյալում շատ ավելի բարձր էլին գնահատվում քան յերկրագործական և անասնապահական արտադրությունները և վոր վերջիններս համեմատած ներկայի գիների հետ շատ ցածր էլին: ⁴⁾

¹⁾ Guill. de Rubrouck. Récit de son voyage Paris 1877, 42, 180

2) **Ղ. Ա. Լիսուհ.** Հայապատում եջ 547. Ալիշանը 2200 դրամի արժեքի մասին հանձնարարություն է նկատում. «Այս դումարն կրնայ ըլլալ ըստ նյութական արժեքից 1350 ֆր. բայց ըստ արժեքից արժանիքի ժամանակին՝ ալիքի բանը 4000»: Այս վկայություն մեջ «խարճ» ընդհանուր բառի տակ պետք է հասկանալ նաև թղթի և այլ նյութերի համար ծախսվածք: 1427 թ.-ի մի ուրիշ վկայությունից տեղեկանում ենք, վոր մի աստվածաշնչի համար ծախսվում է 2000 դահեկան (դեկան?) արված լինելով թուղթն ու անհրաժեշտ նյութերը: Լիսուհայուման, նոտարը էջ 84, 160/161, 199.

3) Թագեոս Ավդարեկյանը հիմնվելով վիճական տարեգրի արձանագրությունների վրա շարք տվյալների վրա կատարել է մի հետաքրքիր ուսումնասիրություն, վոր մատնանիշ է անում այն միջոցը թե ինչպես հնարավոր է ֆեոդ. Հայաստանի ապրանքների գները ճշգրիտ 11-րդ դարուց մինչև 13-րդ դարու ժամանակաշրջանում: Տես Տեղեկագիր ՀԽՍՀ Գիտությունների Ազգային Գրադարանի Ինստիտուտի № 2, Յերեան 1927 թ.:

[illegible]

Ապրանքների արտադրությունը պայմանավորված է շուկայի պահանջով: Վերջինս ել իր հերթին ազդաբնակություն քանակով: Մեր կարծիքով ֆեոդալական Հայաստանի ազդաբնակությունը չէր կարող մեծ լինել: Ազդաբնակության քանակը պայմանավորվում է տվյալ ժամանակաշրջանի արտադրական ուժերի զարգացման չափով: Ֆեոդալական տնտեսության ժամանակաշրջանում արտադրական ուժերի զարգացումը, ինչպես տեսնում ենք, գտնվում էր ցած աստիճանի վրա: Մյուս կողմից մեզ ծանոթ են պարբերական այն խուժումները, վորոնց յենթակա է յեղել ֆեոդալական Հայաստանը: Սրանք առաջին հերթին անդրադառնում էյին ազդաբնակության քանակի վրա: Յեթե սրանց վրա ավելացնենք նաև հաճախակի համաճարակներն ու սովերը և առողջապահության բացակայումը, այն ժամանակ մեզ համար պարզ կը լինի ազդաբնակության աճման դանդաղությունը: Համաձայն Կրեմերի ուսումնասիրության, պարզվում է վոր 622-1495 թ. թ.-ը Սուրիայում, Իրակում, և Յեզիպոսում 94 անգամ խոշոր համաճարակներ տեղի յեն սենցիկ ¹⁾ Այս միայն սրաբ պատմիչների և աշխարհագիրների գրի առածներն են. քանիներ մեզ չեն հասել: Ուստի զարմանալի չէ, յերբ մի շարք հայ պատմիչներ մեզ հաղորդում են այն սոսկալի սովերի և համաճարակների մասին, վորոնց հազարավորներ զոհ էյին գնում: ²⁾

Մի ուրիշ կարևոր հանգամանք խոշոր արգելք էր հանդիսանում ներքին շուկայի աճման: Ազդաբնակության ճնշող մեծամասնություն, գյուղացիական դասի, գնողան կարողությունից զուրկ լինելու հանգամանքն էր այդ թե ներքին և թե արտաքին հարկերի ամբողջ ծանրությունը ընկնում էր արտադրող այս դասի վրա:

Մի կողմից արտադրական ուժերի զարգացման ցած աստիճանը, մյուս կողմից վոչ խիտ ազդաբնակությունը և գյուղացիական դասի գնողական կարողությունից զուրկ լինելու հանգամանքը, խոշոր արգելքներ էյին հանդիսանում արհեստավորական արտադրությունների համար ներքին շուկայի ընդլայնման:

Ում համար էյին արտադրում այդ արհեստավորները և ի՞նչ չափով կապված էյին շուկայի հետ:

Գ). Մի կողմից արտադրված ապրանքների տեսակները, մյուս կողմից գյուղացիական դասի մասին մեր ասածները նկատի ունենալով, պարզվում է այն շուկան, վորի համար սահմանված էյին այդ ապրանքները: Առաջին հերթին արտադրվում էր աշխարհիկ և հոգևոր իշխանների համար:

Յերկար տարիների ծանր աշխատանքով արտադրված գորգերը սահմանված էյին արքայական պալատների և իշխանական դպակների շքեղացման: ³⁾ Վոսկեթել և արծաթաթել մետաքսյա գործվածքները ինչպես և դի-

¹⁾ Alf. v. Kremer. Die. grosse Seuchen des Orients nach arabischer Quellen, S. 44, 49, 56, 59, 72, 76.

²⁾ ԽճԹԵՅԱՆ, Հնախոսություն, հատ. I, էջ 51 հատ. III էջ 360/364.

³⁾ Մ. Ի. Բ., էջ ԳԼ համատ. H. Topdschian, Die Innere Zustände էջ 47

պակները, իշխանական դասի «փափկասուն կանանց» զարդարելու:

Վոսկեթիչները պատրաստում էյին թագավորների և իշխանների համար թագեր, սուրեր, դաշույններ և իշխանական կանանց այլազան զարդեր: Այս վերջինս և ակնարկում Լաստիվերտացին, յերբ նա պերճանքի հավելումը ամբարտաւանություն է անվանում և ավելացնում, «կարի առաւել կանանց ազգի» վորոնց համար անհրաժեշտ էյին զինդեր, մատանիներ, ապարանջաններ և այլն: Այդ պերճանքի առարկաներից անմասն չէր մնում հոգևոր իշխանական դասը: Յեկեղեցիների և նրա պաշտոնյաների համար պատրաստվում էյին խնկամաններ, սկիհներ, խաչեր ավետարանի զարդեր և այլազան իրեր: ¹⁾ Սրանց վրա ավելացնենք նաև ոտար իշխողների արված թանկարժեք նվերները:

Դարբինի առաջին դադմունքն էր, մասնավորաբար քաղաքներում, ազնվականների և նրանց վասսալ իշխանների համար զենքեր պատրաստել:

Շինարարության ասպարիզում հիմնական տեղ էյին բռնում իշխանական դասի ապարանքների, յեկեղեցիների և ամբողջությունների շինությունը:

Առետրական կապիտալի ուժեղացման շրջանում հանդես էր գալիս մի նոր դասակարգ, վոր իր կարգին հանդիսանում էր այդ արտադրողների ապառու:

Ինչ վոր Զոմբարտ յեվրոպական միջին դարի համար ասում է, թե «...բոլոր մետաղագործների ճնշիչ մեծամասնությունը, հյուսվածեղենի ապարիզում աշխատողների մեծ մասը, զրեթե ամբողջ ճարտարապետությունը, չխոսելով պերճանքի առարկաների մասին, իրենց արտադրությունները հարուստներին էյին վաճառում», ²⁾ նույնը կարելի է ասել նաև արևելյան ֆեոդալական յերկիրների համար:

Այս կերպ վորոշվում է այն շուկան, վորի համար արտադրվում էյին այդ ապրանքները:

Արհեստավորական դասի սոցիալական դրություն պարզաբանման տեսակետից մեզ շահագրգիռում է նաև այն հիմնական հարցը, թե արհեստավորական արտադրության ձևը շուկայի հանդեպ զարգացման ի՞նչ աստիճանի վրա էր գտնվում:

Արհեստների շուկայի հարաբերությամբ, պատմական զարգացումը ցույց է տալիս, վոր նրանք անցել են հետևյալ չորս հիմնական ձևերից.

1. Արտադրողներ, վորոնք սպառողների տունն են աշխատում.
2. Արտադրողներ, վորոնք իրենց սեփական տան մեջ վերջին սպառողների համար որավարձով են աշխատում և այնպիսիներ, վորոնք ուրիշ արտադրողների համար են աշխատում. ինչպես ներկարարները, ձուլիչները և այլն:

¹⁾ H. Topdschian Die Innere Zustände էջ 45. Յերբ յեկեղեցին տեղական շուկայում չէր կարողանում գտնել իրեն հարկավոր զարդը, այդ ճարվում էր այլ շուկաներից: Այս մասին պերճախոս որինակ է Անիի մայր յեկեղեցիի համար Հնդկաստանից բերված «Պըլոր կանթեղը». Մ. Ուռհայեցի էջ 149.

²⁾ W. Sombart, Der Moderne Kapitalismus. Bd. I, էջ 218

3. Արտադրողներ, վորոնք տեղական շուկայի համար են արտադրում. լինի այդ ապրանքի վրա, լինի վորպես պահեստ:

4. Վերջապես արտադրողներ, վորոնք ավելի խոշոր շուկայի (միջերկրային) համար են արտադրում (արտահանման համար):

Այս չորս աստիճաններից վորի վրա էլին գտնվում ֆեոդ. Հայաստանի արհեստները.

Մխիթար Գոշը իր Դատաստանագրքի § 124-ը նվիրել է արհեստավորներին. այդտեղ ասված է.

«Արուեստաւորք ամենայն ըստ որում և իցեն արուեստի, եթե հատուածով գործիցեն և եթե վարձով, յորժամ ոչ ըստ հաճոյից տեսնու գործեցին ...»¹⁾

Դատաստանագրքի այս կանոնում ուշադրութեան արժանի յեն «եթե հատուածով գործիցեն և եթե վարձով» դարձվածքը և «տեսնու» բառը: Կարծաւ առաջինը թարգմանել և «sei es dass sie im Gesamtakkord oder in Stücklohn arbeiten» և յերկրորդը՝ «Arbeitsherr»: Պետք է ասել, վոր Գոշի խմբագրութեանը բովանդանին մտած է և կարող է արհեստավորական զարգացման այլազան ձևերին միանգամայն հարմարվել:

Նկատի ունենալով արհեստավորական մի քանի ճյուղերի զարգացումը, կարելի է նրանք դասել վերջին աստիճանին: Մասնավորաբար հշուտվածեղենի ճյուղը, վորի արտադրութեանը վորպես «հայկական» կամ «երդնկայի» կերպասներ անվանի են յեղել: Այս անվանումները առաջադրում են սույն ապրանքների ոտար շուկաներ արտահանումը:

Յեթե արհեստների վորոշ ճյուղերում զարգացման այդ չափը ընդունենք, սա դեռ չինշանակում ըստ արհեստների համար: Հավանաբար, արհեստի այլազան ճյուղերում այդ հիշված չորս աստիճաններն էլ հավասարապես գոյութեան ունենին:

Ուրեմն, ֆեոդ. Հայաստանի վորոշ քաղաքներում արհեստավորական վորոշ ճյուղեր հասել են իրենց զարգացման աստիճանին: Այժմ հարց է առաջանում. արդյոք արհեստների զարգացման այդ աստիճանի վրա առաջացել են համաքաղական կազմակերպութեաններ, վորոնք գուրենթաց են ընթացել տնտեսական այդ զարգացման:

դ) Եղիազարոֆի 17-րդ դարում Հայաստանում համաքաղութեանների գոյութեանը ընդունում է:²⁾ Ս. Թարայանցը Եղիազարոֆին հետևելով գրում է.

¹⁾ Վ. Վրդ. Բասաւմյանց, Մխիթար Գոշի Դատաստանագրքը, § 124, էջ 436 Կարծաւ այս հոդվածը թարգմանում է այսպես՝

In Betreff der Handwerker im allgemeinen, welcherlei Handwerk sie ausüben mögen, sei es dass sie im Gesamtakkord oder in Stücklohn arbeiten, falls sie das werk nicht nach dem Willen des Arbeitsherrn herstellen ...»

²⁾ Taraiantz, das Gewerbe in Armenien S. 54/55. համա նաև հարևան վրաստանի համար Gogitchayschwili, Das Gewerbe in Georgien, S. 100.

«Հայտնի յե արդեն. վոր 17-րդ դարում Հայաստանում գոյութեան ունեցին համաքաղութեանները, վորոնք բովական զարգացած էին: Բայց հավանական է, վոր նրանք շատ ավելի առաջ էլ գոյութեան են ունեցել հայ արհեստավորների մեջ, վորովհետև համաքաղութեանները, վորպես հին ժամանակների ճանապարհորդները վկայում են վաղուց արդեն ծաղկում էին պարսիկների մեջ և Հայաստանը հին ժամանակներում քանիցս գտնվել և Պարսկաստանի ձեռքին կամ գոնե նրա ազդեցութեան տակ»¹⁾

Ինչպես տեսնում ենք, այստեղ պարսկական ազդեցութեան հարցն է դրվում: Մեր կարծիքով, վոր թե ազդեցութեանների հարց պիտի հարուցվեր, այլ հարկավոր էր արհեստավորական արտադրութեան զարգացումը պարզել: Յեթե այդ կազմակերպութեանների տնտեսական հիմքերը գոյութեան չունենային, նրանք չէին կարող առաջ դաւ: Եղիազարոֆի 17-րդ դարի համար համաքաղութեանների Հայաստանում գոյութեան ունենալու մասին ասածը, մեզ համար կարող է ուղեցույց լինել նրանց հետքերը նախորդ դարերում փնտռելու տեսակետից:

Յեթե ճիշտ է մեր այն յենթադրութեանը, թե ֆեոդ. Հայաստանի քաղաքներում վորոշ արհեստներ մեր մասնանշած զարգացման աստիճանին վրա էլին գտնվում, ապա ուրեմն արհեստավորութեան ուրույն համաքաղութեաններում կազմակերպված լինելը մեզ անհաւանական չի թվում:

Այս հարցի վերջնական լուսաբանման համար պեղումներին վերապահված է խոշոր դեր:

Մեր կարծիքով, այս տեսակետից ուշադրութեան արժանի յե «քաղաքացի զլխաւորք»ը, վոր վորքան մեզ ծանոթ է, մինչև այժմ ուշադրութեան չի առնվել:

Այս տերմինը գործ է ածում առաջին անգամ 1045 թվին Արիստ. Լաստիվերտային, յերբ մեզ նկարագրում է Անիի զրավումը բյուզանդացիների կողմից:

«... Իսկ քաղաքացի Գլխաւորքն որ նստէին յԱնի...»²⁾ Նման մի վճռական բողոքի առթիվ (Անիի զրավումը Սելջուկ թուրքերի կողմից 1064 թ.), գտնում ենք նույն տերմինը Կիր. Գանձակեցու մոտ.

«... և որք զլխաւորքն էին ի քաղաքին»³⁾ Ուղեր էլին այս «քաղաքացի զլխաւորք»: Մեր կարծիքով, սա հատուկ մի տերմին է, վոր առաջացել է արտադրական նոր փոխ-հարաբերութեաններից, քանի վոր, պատմիչը նախորդ յերեսի վրա տալիս է յերկու կուսակցութեանների գլուխ կանգնող իշխանները և անմիջապես, առանց դեպքերի լուսաբանման, գործ է ածում «քաղաքացի զլխաւորք»ը:

Արժե հիշատակել այստեղ, վոր հունարեն նոր կտակարանի presbyteros բառը 5-րդ դարում հայերեն թարգմանվել է զլխաւոր: Իսկ presbyteros մի

¹⁾ Ազգագրական հանդես, գիրք III, էջ 61/62. Թիֆլիս:

²⁾ Արիստ. Լաստիվերտայի. Գլ. Ժ. էջ 42

³⁾ Կիր. Գանձակեցի. Գլ. Ի. էջ 139.

շարք նշանակութիւնների կողքին, նշանակել ե նաև երեց, ամենից տա-
րիքավորը:

Մենք սրանից դեռ ևս չենք կարող յեզրակացնել, խնդրո առարկա
քաղաքացի դիտարկումները վորպես արհեստավորական դասի ներկայացու-
ցիչներ: Անշուշտ, առևտրական կապիտալի ներկայացուցիչները պետք ե
ավելի գերակշռող դիրք գրավելին:

Ուշադրութեան արժանի ե նաև մի այլ տեղում, վոր դործ ե ածվել
Անիի 13-րդ դարին վերաբերող արձանագրութիւններում: Հայտնի յեն
վոր միջնադարյան Յեվրոպայի համաքարական կազմակերպութիւններից
կազմվել ե քաղաքի խորհուրդ: Մեր ակնարկածը վերաբերում ե նման
մի խորհուրդի:

Պրոֆ. Որբելիի հրատարակութեան տված Անիի 1269, 1289 և 1290 թ.
թ. վերաբերող արձանագրութիւններում կա «Երեցանի» տեղանունը, վոր
գործ ե ածվում վորպես քաղաքի խորհուրդ: ¹⁾ Այս թվականներում քահա-
նանքը յերեց չեն անվանվում:

1126 թ. Ապրիլի վորդին, յերբ դալիս ե Անին զրավելու, այսպիսի
մի ուշագրավ վկայութիւն ունենք.

«...դայ ի խնդիր (Ապրիլի վորդին՝ փառաւոր) հայրենի քա-
ղաքն Անույ, և աղերսանօք խնդրէ յԱպրիլի և յաւագաց քաղա-
քին...»²⁾

1258 թ. Մուֆարգինի պաշարման առթիվ նույն սլաոմիչը գործ ե
ածում «... աւագ և զլուս երեցանցն որ անդ»³⁾ ... դարձվածքը:

Սրանց միանում ե ն. Մառի հետեյալ կարծիքը. «Անիի լիակա-
տար ինքնավարութիւնը բնորոշվում ե նույնպես ավագների այն
խորհրդով, վորը վարում եր քաղաքի բոլոր գործերը, և նրանց կար-
ծիքը շատ անգամ ավելի նշանակութիւն եր ունենում քան կառա-
վարչի ցանկութիւնն ու հայացքը: Ավագների այս խորհուրդը, վորի
ծագման մասին առ այժմ դեռ տեղեկութիւն չկա, համեմայն դեպս
գոյութիւն ունեւ Շեղատայանների, վրացիների և Յերկայնաբաղուկ-
ների՝ Անիում տիրապետութեան ընթացքում»⁴⁾

Համաձայն ն. Մառի այդ ավագների խորհուրդը հասնում ե մինչև
1072 թ. ն. Մառը Անիի ինքնավարութեան մասին առաջին անգամ խոսել
ե թաթարական շրջանից մեզ հասած մի արձանագրութեան մեջ «որ եղև
մայրաքաղաք Անի խասինջու»⁵⁾, նախագասութեան մեջ «խասինջու» բառը

¹⁾ 1926 թ. ամռանը հնարավորութիւն եմ ունեցել Լենինգրատում
հրատարակչի մոտ այդ արձանագրութիւնները կարդալու:

²⁾ Վարդան, հավաքումն պատմութեան, Վենետիկ 1862 եջ 120.

³⁾ Վարդան, եջ 151

⁴⁾ «Արարատ» ամսագիր, № 6, 1911 թ. եջ 481 հմմտ. նաև Լ. Օրբելի,
«Развалины Ани» «Нева» ամսագրի № 5-ում 1911 թ. եջ 421, 425.

⁵⁾ Լ. Կոտսանյանց, Վիմական տարեգիր, եջ 221.

ստուգարաններին: ն. Մառը այդ նախագասութիւնը թարգմանել ե «так как
столица Ани сделалась уделным владением»¹⁾ Արդյոք Արիստ. Լաստիվեր-
տայի «քաղաքացի զլխավորք» դարձվածքի և կամ Կիր. Գանձակեցու «...
որք զլխավորք էին ի քաղաքին...» պարբերութեան և այս ավագների խոր-
հուրդի միջև գոյութիւն չունի մի կապ:

Վերին աստիճանի կարեւոր մի հարց, վորի պարզարանումը կարոտ ե
դեռ ևս նոր վկայութիւնների: Ինչպես վերի ասացինք, այս հարցի լուսա-
բանման տեւականից խոշոր դեր ունեն կատարելիք անցյալի քաղաքների
ավերակներում կատարվելիք պեղումները:

Ֆեոդ. Հայաստանի արհեստավորական-առևտրական քաղաքներում
կար մի շարիշ դասակարգ, վոր անկասկած ավելի խոշոր դեր եր կատա-
րում քան արհեստավորները:

Այդ դասակարգը բաղկանում եր առևտրական և վաշխառուական կա-
պիտալի ներկայացուցիչներից:

IV. ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՅԵՎ ՎԱՇԽԱՌՈՒԱԿԱՆ ԿԱՊԻՏՈՒԼ

Ա.

Առևտրական և վաշխառուական կապիտալները, վորոնք անբաժան են
միմիանցից, գոյութիւն են ունեցել դեռ շատ վաղ ժամանակներում: Այս
յերևույթը բացատրվում ե այդ յերկու կապիտալների բնույթով:

Յերբ ուսումնասիրում ենք ֆեոդ. Հայաստանի քաղաքների բարգա-
վաճումը, գյուղական և քաղաքային ազգարնակութեան մեջ առաջացած
փոփոխութիւններն ու հակադրութիւնները ստիպված ենք ավելի հանգա-
մանորեն կանգ առնել տնտեսական այս գործոնի վրա և ցույց տալ մի
կողմից նրա սլաոմական պրոցեսում ստացած փոփոխութիւնը և մյուս
կողմից վեր հանել այն դերը, վոր նա կատարել ե ֆեոդ. Հայաստանի հա-
սարակական կյանքում:

«Վորքան անդադրացած ե արտադրութիւնը, նույնչափով ել դրա-
մական կարողութիւնը վաճառականների ձեռքում ե կենտրոնանում,
կամ վաճառականական կարողութեան մասնահատուկ ձև ե հայտ դա-
լիս»²⁾

Կար Մարքսի այս նկատողութիւնը, վորը վերաբերում ե առևտրա-
կան կապիտալի պատմական զարգացման պրոցեսին, վորոշակի յերևան ե
հանում այն դերը, վոր ան կատարելու եր արտադրութեան դեռ ևս վոչ զար-
գացած աստիճանի վրա:

Իսկ այդ դերը ավելի մեծանում ե, յերբ հետևում ենք առևտրական

¹⁾ Н. Марр, Новые материалы по Армянской эпиграфике. Записки
Вос. Отд. II. Р. Арх. Общ. т. VIII. еջ 77—80. СПб. 1893.

Մառը նույն կարծիքը հայտնում ե նաև «Помощ Армении»-ում ապա-
մի հոդվածում:

²⁾ К. Марх. Das kapital III, кар. 19 5. 310.

կապիտալին արտադրական այն պայմաններում, յերբ գոյու թյուն ունեն
եքստրեմներ: Մարքսը բացորոշ գրում է այս մասին.

«Այն որենքը, Վոր վաճառականական կապիտալի ինքնուրույն զարգացումը կապիտալիստական արտադրության զարգացման աստիճանի հետ խոտոր ե համեմատում, հայտ ե գալիս ամենից ավելի միջնորդ վաճառականության (Zwischenhaudel) սլատմության մեջ. ինչպես վեներտիկցիների, ճենովացիների, հոլանդացիների և այլնի մոտ Վորտեղ գլխավոր շահը արվում ե վոչ թե սեփական յերկրի արտադրույթների արտաժույթով, այլ՝ վաճառականական և տնտեսական յերույթների արտաժույթով, այլ՝ վաճառականական և տնտեսական տեսակետից չզարգացած հասարակությունների արտադրույթների միջնորդ հանդիսանալով: Այստեղ զտարյուն վաճառականական կապիտալն ե, բաժանված եքստրենսներից—արտադրության յերկրամասերից—, Վորոնց միջև միջնորդի դեր ե կատարում: Այս ե հանդիսանում նրա կազմավորման գլխավոր աղբյուրը:¹⁾

Մարքսը այս և հետագա տողերում տալիս է առևտրական կապիտալի կազմավորման և զարգացման գլխավոր աղբյուրը: Տնտեսական զարգացման այդ աստիճանի վրա առևտրական կապիտալը գտնվում էր մենաշնորհյալ լինելու դրուժյան մեջ և այս իսկ հպնգամանքից ստեղծվում էր նրա համար վերին աստիճանի նպաստավոր հոդ:

մար վերին աստիճանի նպաստավոր հոգի։

Ֆեոդալական Հայաստանի արաբական շրջանում առևտրական կապի-
տալի կազմավորման և աճման մասին գաղափար կազմելու տեսակետից,
մեզ անհրաժեշտ է մի կողմից աչքի առաջ ունենալ յերկրներին այն կոմպ-
լեքսը, վորտեղ գտնվում եր ապրանքափոխանակության ծանրության կենտ-
րոնը և մյուս կողմից վեր հանել այն դերը, վորը վիճակվել եր ֆեոդ. Հա-
յաստանին յերկրներին այդ կոմպլեքսի մեջ։ Միայն այդ ընդհանուր ֆոնի
վրա հնարավոր կը լինի ֆեոդ. Հայաստանի առևտրական կապիտալի մա-
սին վորոշ գաղափար կազմել։

[illegible]

Իսկ այդ ապրանքափոխանակության ծանրությունը կենտրոնը հանդիսանում էր արբանյանների արաբական պետությունը: Տրված լինելով այն, վոր արաբական հողամասերից ելին անցնում, անմիջականորեն, Արեւելքի ապրանքները:

Ջրային հաղորդակցության ասպարիզում այս պետությունների սահմաններում բացառաբար, նկատի չեն գալիս Միջերկրականը, Սև ծովը, Կասպիական ծովը և Պարսից ծոցը: Իսկ ցամաքային հաղորդակցության համար կարավանների ճանապարհները:

Այստեղ մեզ շահագրգռում են այս վերջին ճանապարհները:
Համաձայն Fr. Stüwe-ի վորը բարեխիղճ կերպով ուսումնասիրել է

արաբական աղբյուրները, Բաղդատից մեկնել են հինգ գլխավոր կարավա-
նի ճանապարհներ¹⁾։ Սրանցից յերկուսը արևելյան և արևմտյան ճյուղա-
վորումներով անցնում են ֆեոդ․ Հայաստանից։ Արևմտյանը ճյուղավորվե-
լով հասնում է նաև Հալեպ և նրա վրայով շարունակվում Միջերկրական
ծովի ափը։ Յերրորդ կարավանի ճանապարհը յերկարում է մինչև Պարսից
ծոց և այս կերպ հարաբերություն է հաստատվում Հնդկաստանի, Հնդկա-
չինի և Ափրիկեյի արևելյան յեզերքի հետ։ Արաբների Հնդկաստանի և Զի-
նաստանի հետ ծովային ուղիով 9-րդ դարի կեսուն ունեցած առևտրական
հարաբերությունների մասին մեզ լիակատար տեղեկություններ են տալիս,
արաբ առևտրականների պատմվածքները²⁾։ Բաղդադը մի ուրիշ գլխավոր
կարավանի ճանապարհով կապվում է ուղղակի Հալեպի հետ և սրա վրայով
Միջերկրական ծովի հետ։ Իսկ վերջին ճանապարհով Բաղդադը՝ Համադան-
Նիշապուրի վրայով կապվում է կենտրոնական Ասիայի հետ։

Ներշնչվելով Վրացի կապուցյան և կենտրոնական Ասիայի հոգևորականների օրինակով, Երվանդը հարգելով հայ ազգային և եկեղեցական ավանդույթները, անհրաժեշտ էր համարում հայտնի դարձնել հայ ազգային և եկեղեցական ավանդույթները, անհրաժեշտ էր համարում հայտնի դարձնել հայ ազգային և եկեղեցական ավանդույթները, անհրաժեշտ էր համարում հայտնի դարձնել հայ ազգային և եկեղեցական ավանդույթները:

Ճանապարհներին րայ ցանցի մեջ մեզ շահագրգռում են, մասնավորա-
բար, Բաղդադից մեկնող և արևելյան ու արեւմտյան ճյուղավորումներով
Ֆեհմա Նասրադինի անցնող կարավանի ճանապարհները:

Նախ քան Fr. Stiive-ի ուսումնասիրությունյան ծանոթանալը, Բաղդադից մեկնող այդ յերկու ճանապարհներին ելինք հանգել ավելյուրների և պոլություն ունեցող քարտեաների ուսումնասիրությունը:

Մարկոսյան ճանապարհը անցնելով Միջագետքից հասնում էր Ամիգ—
Մայաֆարիքին—Արզան—Բիթլիսի։ Բիթլիսից յերկու մասի էր բաժանվում.
մին Ոստան-Վանի վրայով դեպի արևելք Բերկրի հանցնում և շարունակ-
վում դեպի Պարսկաստան՝ իսկ քաղաքը³⁾։ Յերկրորդը, վոր Բիթլիսից Դատ-
վում դեպի հարավ, հետաքրքրում է մեզ, վորովհետև անցնելով
վան և զնում, բացառապես հետաքրքրում է մեզ, վորովհետև անցնելով
վան և զնում, բացառապես հետաքրքրում է մեզ, վորովհետև անցնելով

Արևելյան ճյուղավորումը, վոր կրկին Բաղդադից ե դուրս գալիս, անցնում ե Պարսկաստանի վրայով Մաբադա—Ուրմիա—Դիման—Խոյ քա-

1) Friedrich Stüwe. Die Handelszüge der Araber unter den Abbassiden. Berlin 1836. Հմտ. գրքի հետևում գտնվող քարտեզը:

2) Relations des voyages faits par les Arabes et les Persans dans l'Inde et à la Chine, par. M. Reinaud, Paris 1845. Նույնպես M. Ed. Dulaurier. Relation des voyages. Paris 1844.

³⁾ Նասիրի Խորասան, Խորասանի սելջուկ Աբու Սուլեյման Ճաղրի սուլթանի գանձապահը, 1045 թ. Մերզվեց ճանապարհ ընկնելով գնում է Մեքքե։ Նրա անցած ճանապարհը մեզ պահեն, 1045 թ. Մերզվեց ճանապարհ ընկնելով գնում է Մեքքե։ Նրա անցած ճանապարհը մեզ պահեն, 1045 թ. Մերզվեց ճանապարհ ընկնելով գնում է Մեքքե։ Նրա անցած ճանապարհը մեզ պահեն, 1045 թ. Մերզվեց ճանապարհ ընկնելով գնում է Մեքքե։

¹⁾ Ibid, Das Kapital III₁, Kap. 19. 5. 312/13, 314/15.

ղաքներից և հասնում նախիջևան—Դվին: Դվինից ճյուղավորվում են մի շարք ճանապարհներ, վորոնցից մին գնում է Թիֆլիս, մյուսը Բարդավի վրայով (Բարդավը Առանի կենտրոնական քաղաքն էր, նշանավոր իր ալ կուրկի կոչված շուկայով) անցնում է դեպի հյուսիս՝ Դերբենդ (Բար-ալ-Աբվար) և հարավ-արևելք՝ դեպի Արդաբիլ: Դվինից մեկնող յերրորդ մի ճանապարհ, վոր մեզ այժմ ավելի յն շահագրգռում, հյուսիսային և հարավային ճյուղավորումներով հասնում է կրկին Արծն-Կարին (Երզրում)¹⁾: Հետագայում Պարսկաստանից Տրապիզոն դացող ճանապարհը, փոխանակ Դվինի անցնում էր Անիից²⁾: Անցյալի այդ առևտրական հարաբերությունների անցնումը մեզ հասել է Անիի հոյակապ կամուրջը և մի շարք ուրիշներ-Արպա-Չայի վրա³⁾:

Առևտրական ճանապարհների այս ցանցը մի քանի տեսակետներից շահեկանություն է ներկայացնում:

1. Բաղդադից մեկնող և արևելյան ու արևմտյան ճյուղավորումներով ֆեոդ, Հայաստանից անցնող ճանապարհները հանգում են մի այնպիսի միջնորդ մեզ ներառյալովում է մի առևտրական կենտրոն, վոր անմիջական կապ ունի Տրապիզոնի հետ⁴⁾: Կարինը առևտրական հարաբերության մեջ էր նաև Վրաստանի և Պարսկաստանի հետ⁵⁾: Վերև մեր հիշած Ամեդից դեպի Հալեպ մեկնող ճանապարհը Հայաստանը կապում էր Միջերկրական ծովին:

Ինչ վերաբերում է Դվինից դեպի Դերբենդ մեկնող ճանապարհին, Ֆա. Շտյուվեն ցույց է տալիս, վոր այդ ճանապարհը Կասպիականի յեզերքը գտնվող այժմյան Աստրախանի և Վոլգայի միջոցով կապվում էր հարավային Ռուսաստանի Քյուստալի (Քիյեվ) հետ և յենթադրվում է, վոր Դոն և Վոլգա գետերի միջև, նրանց իրար ամենամոտ յեղած մասում, գոյություն

ուներեղ ե-ջրանցք¹⁾: Վոր Դերբենդում հայ առևտրականներ յեղել են, այդ մասին ունենք հետևյալ ուշագրավ վկայություններ:

Տարարի արար պատմիչը Դերբենդի նվաճման մասին խոսելիս ասում է.

«Հայք այստեղ չեն բնակում, այլ միայն անցուղարձ կ'անեն»:²⁾

Ըստ յերեվոյթին, այդ առևտրական հարաբերությունները հետագա դարերում ստացել են ավելի ուժեղ բնույթ, վոր 1085 թ. Մատթ. Ուռա-հեցին այնտեղ հայ թագավորների մասին է խոսում.

«... էին և այլ թագավոր հայոց ի Դարբանդ աշխարհին, որ ասի Կադանք, սահմանակից Օղաց և Աղուանից...»³⁾

2. Յերկրնրդ յեզրակացությունը, վոր բղխում է անմիջականորեն առևտրական ճանապարհների այս ցանցից, ֆեոդ. Հայաստանի տարանցիկ մի յերկիր լինելու հանգամանքն է: Մի պարագա, վոր առևտրական կապիտալի կուտակման և աճման համար վերին աստիճանի նպաստավոր էր հանդիսանում: Ֆեոդ. Հայաստանը գտնվում էր այն պայմանների մեջ, վորոնց մասին խոսել է Մարքսը առևտրական կապիտալի պատմական զարգացման մասին կատարած իր վերլուծումների մեջ:

Թեև մեր ուսումնասիրության ժամանակաշրջանի մասին մասնավոր առևտրականների կուտակած հարստության վերաբերող վկայություններ չունենք, սակայն, մի քանի կարևոր առևտրական կենտրոնների՝ ինչպես որինակ Կարսի, Արծնի, Դվինի, Սլավի մասին ունենք հատկանշական բնութագրություններ, վորոնք կարելի է ուղղակի փաստեր համարել մեր մատնանշած առևտրական կապիտալի կուտակման համար:

Այսպես որինակ՝ Լաստիվերտացին 1053 թ. «յգլիպցեալ» Կարս քաղաքի մասին ասում է.

«... հարստացեալք բազում ընչեղութեամբ ՚ի ծովէ և ՚ի ցամաքէ...»⁴⁾

Կամ 1049 թ. Արծն քաղաքի մասին հետևյալ վկայությունը.

«Այլ քաղաքին, և քաղաքի այսպիսում, որ հոյակապ և ականա-վոր էր ամենայն աշխարհաց, ... և ծով և ցամաք երկնէր և առատա-նայր կրել ՚ի սմա զգորութիւն իւր...»⁵⁾

1) Fr. Stäwe, Die Handelszüge etc. տես գրքում յետը գտնված քարտեզը Պրոֆ. Հակ. Մանանդյանը նույն յեզրակացության է գալիս Դվինից Դերբենդ մեկնող ճանապարհի մասին: Հակ. Մանանդյան, Հայաստանի պատմությունը թուրք թագավորական արշավանքների շրջանում. էջ 86, նի պատմությունը թուրք թագավորական արշավանքների մասին «Новый Восток»-ի № 8—9 (1925 թ.) համարում Բ. Գրյուկ-Կրյաշին-ի, Великие Пути в мировой истории հոդվածը:

2) Բագրատ Խալաթյանց, արաբացի մատենագրեր Հայաստանի մասին էջ 84. Վիեննա 1919.

3) Մասթ. Ուռահեցի, էջ 231 Վաղարշապատ 1898.

4) Արիս. Լաստիվերտացի, Գլ. ԺԵ. էջ 61.

5) Ibid Գլ. ԺԲ. էջ 53.

1) Հմմտ. այս ճանապարհների ցանցի մասին. Իեն Խաուսալ, էջ ԳՁ1. Խասալի, էջ 197—197. H. Topdschian, die Innere Zustände, էջ 41/42. Ghazarian. Armenien unter der Araberherrschaft էջ 68. K. Reichel, Städt. höhere Lehranstalt zu Charlottenburg 1900. Բարտավի մասին, վորպես առևտրական կենտրոն քաղաքի, հմմտ. В. Бартольд, Место при каспийских областей и т. д. Баку 1924 էջ 34.

2) W. Barthold, „Ani“ in Encyklopedie des Islam.

3) Հմմտ. Н. Я. Март, Раскопки в Эриванской губернии տես „Отчет Имп. Арх. комиссии“ за 1892 г. СПб. 1894 թ 75—86.

4) Կոստանդին Պորփյուրոզե (Գլ. 46, 207 էջ, 23—208, 4) Կեսթրնու (II, 577, 7 շար.) Թեոդոսուպոլսի (Կարին) մոտ Արծն քաղաքի վաճառականական նշանակությունը, 11-րդ դարում, նկարագրում են: Ստորև հայ պատմիչների վկայություններից ավելի հանգամանորեն կր խոսենք այս քաղաքի մասին: Արաբական աղբյուրների վրա հիմնվելով Fr. Stäwe (Die Handelszüge etc. s. 184) խոսում է Երզրումի առևտրական դերի մասին:

5) Կոստանդին Պորփյուրոզե. Գլ. 45, 200 էջ, 13—17, 205 էջ, 16—21.

Իսկ Թովմա Արծրունիի մոտ կարդում ենք 893 թ. Դվինի մասին.

«...յորդում շահաստան Դուին, ժարգախիտ պարսպաւոր պատնիշօք պատուարեալ և տուրեւառիկ վաճառականութեամբ և ազգի ազգի

Նասիրի խոսքառուի վկայությամբ 1045 թ. Խլաթ քաղաքը միջազգային առևտրական կենտրոնն է հանդիսանում,

«Նոսում են այդ քաղաքում, ասում է ճանապարհորդը, յերեք լեզուներով, արաբերեն, պարսկերեն և հայերեն... վաճառականական

1064 թ. Անեցի «այլ փառավորին» մորուքն են կտրում Անտիոքի հույները և ինչքերը գրավում: «Գորգ Շիրակացին», ասում և պատմիչը, «առեալ զգօրս թուրքաց հինգ հարիւր այլ», ավերում և 12 զւեղեր:³⁾ 500 թուրքերին վարձելու համար պարզ է, վոր նա պետք է ունենար բավական հարստութուն:

13-րդ դարուն վերաբերող վկայություններ խոսում են հարուստ վաճառականների մասին. այսպես որինակ Կարնեցի Ուսեկի մասին, վոր թիֆլիս եր հաստատվել Կարենի թաթարների կողմից գրավումից հետո և վորին վրաց Դավիթ թագավորը հայր եր անվանում:՝) Սրա վորդին, ճարը, Գոշա վանքի արձանագրություն մեջ ասում ե.

«...իմ հայրն Ումեկ, գնեալ էր զԳեորգի ի քառասուն հազար
կարմիր տուգատի: Եւ շարս գնեցի զՅովս իւր ամէն սահմանաւքն ի
դառն ժամանակի, որ հայրենիքն արժան էր ու ոսկին թանկ, ի ԴՌ
կարմիր տուգատ:»⁵⁾

կարմիր տուկատ:»⁹⁾
Առևտրական կապիտալի հեշտ կուտակման մասին ուշագրավ մի ակ-
նարկ է նաև այն նամակը, վոր Բազրատունի Սմբատ Լ-ը (890—914 թ.թ.)
ուղարկել է Ատրպատականի եմիր Մուհամմետ ալ Աֆշինին, յերբ վերջինս
անհանգստացել էր Սմբատի և Լեո կայսեր միջև ստեղծված մերձեցումից:
Սմբատը իր դեսպանների միջոցով Աֆշինին բացատրում է, վոր իր և հու-
նաց կայսեր միջև լուկ առևտրական մի դաշինք է կնքված: Ժամանակակից
պատմիչը հետևյալ կերպով հաղորդում է.

«...զի թէ սէր ընդ կայսեր եղի, և այն ևս, վասն ձեր օգտի, զի թերևս որ պիտոյ է ամիրապետին մեծին. և զքոյ ևս զիւրաւ զպէտս ի յունականաց անտի գտանել մարթացից, և ի նպաստ օժտության ձեզ ընծայել զերեւիլ հանդերձից և զարդուց և զսպասուց վայելս. այլ և վաճառականաց՝ որք ընդ դենիդ քո բացեալ ճանապարհ, զի արասցեն մուտ աշխարհս նոցա, և ի նոցա լիութենէն փարթամացուցեն զձեր գանձարանսդ»;⁶⁾

¹⁾ Թովմա Արծրունցի, III, Գլ. ԻԲ. Էջ. 230.

²⁾ Relation du voyage de Nassiri Khosrau, trad. fr. par Ch. Schefer, Paris 1891 *թ.* 21/22.

3) Մասք Ուռափեցի, Էջ 225/226.

4) Կիր. Գաճապեցի, Գլ. ծե. հշ 210. Վարդան, ՁԸ հշ 147.

1283 p.

5) Կ. Կոստանյանց, Վիմական Տարեգիր, Էջ 124.

6) Հովհ. Կաթողիկոս, ԳԼ. ԼԱ. Եջ 201.

«Եւ ի նոցա լիութենէն փարթամացուցեն զձեր գանձարանսդ» պար-
բերությունը ցույց եւ տալիս առևտրական կապիտալի այն արագ կուտա-
կումը, վոր հատուկ եր այդ ժամանակներին:

Պատժակա՛ն այս վկայությունը միաժամանակ ցույց է տալիս այն ուժեղ առևտրա՛կան հարաբերությունը, վոր ստեղծվել եր Բյուզանդիոնի և Հայաստանի միջև: Այդ առևտրական սերտ հարաբերությունը ապացուցվում է նաև հայ և հույն առևտրական կապիտալի միջև ստեղծված պայքարով, վորը հատուկ ուսումնասիրության նյութ կըդառնա:

Հաստատապես կարելի է ասել, վոր այս ժամանակաշրջանում ֆեոդ. Հայաստանում գործող առևտրական կապիտալի համար կոդոպտեիլը բոլոր նախադրյալները գոյություն ունեյին:

ա) Ծալբ յերկիրների միջև կատարված ապրանքափոխանակութիւն.
բ) Այդ յերկիրներու մէջ գոյութիւն ունեցող վոչ զարգացած արտադրական յեղանակ.

Գ) Հավելյալ արդյունքի գերակշռող մասի յուրացում առևտրական
կապիտալի կողմից¹⁾

Այս պայմաններում առևտրական կապիտալի այս կերպ ուժեղացումը, սակաված, իր անդրադարձումը պիտի ունենար ազգաբնակչության այլ շերտավորումների վրա։ Սակայն, հախ քան այդ հարցին անցնելը մեզ հարկավոր է մի դադափար կազմել այն ժամանակվա վաճառականության հազմակերպության մասին։ Այս հարցի պարզաբանումից հետո վորոշ հա-
կազմակերպության մասին։ Այս հարցի պարզաբանումից հետո վորոշ հա-
կազմակերպության մասին։ Այս հարցի պարզաբանումից հետո վորոշ հա-

կազմակերպության մասին։ Այս հարցի պարզաբանումից հետո վորոշ հա-

Վերև ապրանքափոխանակության ընդհանուր ցանցը յերևան հանելուց հետո, ընդգծեցինք ժամանակաշրջանի հաղորդակցություն միջոցների տեխնիկայի զարգացման աստիճանը նկատի առնելու անհրաժեշտությունը:

Առհասարակ արտադրական ուժերի զարգացման չափը պայմանավորում է պատմական մի վրոշ ժամանակաշրջանում տնտեսական տվյալ բնագավառում գոյություն ունեցող կազմակերպությունը: Նկատի ունենալով այն հիմնական սլարաֆան, վոր արևելքում հաղորդակցություն միջոցների տեխնիկան դարեր շարունակ իր նախնական վիճակումն է գտնվել ուստի, հետագա դարերի վաճառականություն կազմակերպման ձևը առավել կամ նման չափով պիտի իհնեք նույնը:

Այս ժամանակաշրջանի վաճառականության կազմակերպություն մասին կաշխատենք պարզել միայն յերկու հարց.

ա) Հաղորդակցության միջոցների տեխնիկան և ճանապարհորդութունների հետ կապած ուժեղացումները:

Բ) Տիրող անապահովությունը կարավանի ճանապարհների վրա:
 ա) Յերբ կարգում ենք Արևելքի կարավանի ճանապարհների միջոցով
 կառավարված ճանապարհորդական նկարագրությունները, ճանապարհորդու-
 թյուններ, մոտենք հնարավոր են յեղել մի շարք զգվարություններ հազ-

¹⁾ К Маркс, Das Kapital III, кап. 19, 5, 314/315.

թահարելով, յերբ մեզ ծանոթ են այդ ճանապարհների վրա տիրող անապատավորությունն ու բազմաթիվ մաքսային դժվարությունները, այն ժամանակ բոլորովին այլ պատկեր ենք ստանում Արևելքի առևտրականի մասին, ինչ վոր ունենք այժմյան կապիտալիստական յերկրներին առևտրականների մասին: Յերբ անցյալում վաճառականները կարավանների հետ շրջում էին քաղաքից քաղաք, այժմ առևտրականը մտավոր միջոցներով աշխատում է տիրապետել համաշխարհային շուկային իր տրամադրությունն առնելով ունենալով տեխնիքական բազմազան հարմարություններ:

Բավական է մի որինակ բերել անցյալի վաճառականների ապրանքների տեղափոխության ընթացքում հանդիպած դժվարություններից, այն ժամանակ մեզ համար պարզ կը լինի այն հսկայական տարբերությունը, վոր առաջանում է հաղորդակցության տեխնիկայի զարգացած չլինելու հանգամանքից.

«Տեսանք նրանցից(հայ վաճառականներից)», ասում է Պիտոնը Տուրնեֆոր, «շատեր և ամենահարուստներից վոտով մեծ գետերն անցնելիս, ջուրը մինչև վիզը, բարձրացնելու ընկած ձիերը՝ փրկելու համար իրենց մետաքսի հակերը...»¹⁾

Վաճառականը ստիպված էր որեք, ամիսներ, նույնիսկ տարիներ ճանապարհորդության մեջ լինել: Վերջինք թովմա Արծրունիի խոսքերը Դվինի վաճառականների մասին.

«...և վաճառականքն զհեռաւոր ճանապարհացն խոկային պատրաստութիւն...»²⁾

Իստախրիի և Իբն Հաուքալի հաղորդած քաղաքների հեռավորությունները մեզ գաղափար են տալիս այդ ժամանակաշրջանի հաղորդակցության միջոցների տեխնիկայի զարգացման աստիճանի մասին: Համաձայն այդ վկայությունների՝ Բարտալը Արտապիլից 50 փարսախ, Թիֆլիսից 52 և Դվինից 80 փարսախ հեռու էր: Մարագայից Դվին 50 փարսախ=7 որվա ճանապարհ:³⁾ Արդարիլից Ամիդ ուղիղ մի ճանապարհ 225 փարսախ: Այդ ճանապարհը անցնում էր. Արդարիլ—Մարագա (40 փար.)—Ուրմիյա (20 փ.համաձայն Իստախրիի 4 որ.)—Մալմա (2 որ.)—Խոյ (9 փար.)—Բերկեր (30 փար.)—Արճեշ (2 որ.)⁴⁾—Խլաթ (3որ.)—Բիթլիս (3 որ.)⁵⁾—Արծն

1) Pitton de Tournefort, Voyage du Levant t. II, էջ. 393

2) Թովմա Արծրունի, III, Գլ. Թ. էջ 172.

3) Իստախրի, 192-193 Իբն Հաուքալ, ԳՁ1. համաձայն այս պատմիչների վկայության՝ կարավանը կարողանում էր մի որվա ընթացքում 7 փարսախ ճանապարհ կտրել: Փարսախը 4-6 քիլ. մ. ընդունելով, կարավանը կարողանում էր, ուրեմն, մի որվա ընթացքում 28-42 քիլ. մ. ճամբա անել:

4) Իստախրի գնում է մի որ, Աբուլֆիզան 2 որ. էջ ԳՁ.

5) Իստախրի գնում է մի որ, Աբուլֆիզան, Մուհամմադ յեվ Իդրիսի 3 որ:

(1 որ.)¹⁾—Մոյաֆարիքին (4 որ.)—Ամիդ (2 որ.): Ուրեմն Արդարիլից Ամիդ հասնելու հնարավոր է լինում 32 որվա ընթացքում:

Հետագա դարերից մեզ հասած վկայությունները գալիս են միանգամայն հաստատելու այս իրողությունը:²⁾

Հաղորդակցության միջոցների չզարգացած լինելը, ինչպես նաև այն փաստը, վոր ապրանքները գլխավորաբար ոտար յերկրների արտադրություններ էին, առաջ էր բերում այն հետևանքը, վոր հայ առևտրականներից շատեր իրենց կյանքի մեծ մասը անց էին կացնում Հայաստանից դուրս: Արանով և բացատրվում Միխիթար Գոշի դատաստանագրքի § 13ը:

«ԺԳ. Յորժամ այր վասն պատճառի իրիք և կամ յաղագս վաճառի ճանապարհ երթալ յամիցէ անսալ արժան է կնոջն»³⁾

Ուրեմն, «յաղագս վաճառի» ուշանալը մի տարածված յերևույթ է յիդել, վոր դատաստանագրքում հատուկ մի կանոն սահմանվում է այդ վաճառականի կնոջ համար:

Այս պարագան արժե ընդգծել առևտրականների ֆեոդ. Հայաստանի սոցիալական կյանքում կատարած դերի բնորոշման տեսանկյունից:

բ) առևտրական գործառնությունների տեխնիկան պայմանավորվում է առաջին հերթին փոխադրական և հաղորդակցության այն միջոցներով, վորոնք գոյություն ունեցել են այս ժամանակաշրջանում: Մենք բոլոր կետերի վրա չենք ծանրանա: Այստեղ արժե ընդգծել ճանապարհների վրա տիրող անապատավորությունը, վոր դարեր շարունակ գոյություն է ունեցել:

Այսպես Ալ-Մանսուր Խալիֆի (754-775 թ. թ.) ժամանակաշրջանին վերաբերվող մի վկայություն, սուրիացի պատմիչ Դենիի կողմից, մեզ ասում է.

«...Գրավում էին ճանապարհները և կողոպտում անց ու դարձ անողները...»⁴⁾

843 թվի մասին Միքայել Սուրիացի պատմիչը մեզ տալիս է հետևյալ վկայությունը.

«Այս թվականին (843), Մանսուրը, Աֆիշինի քրոջ վորդին, սկզբում կողոպտել վաճառականները և մտածում էր ապստամբել: Հայաստանցի մի վաճառական բռնեց և կողոպտեց նրա ունեցածը»:⁵⁾

1) Մուհամմադ Բիթլիսից—Արդն ունի 2 որ և Արդնից—Մոյաֆարիքին 2 որ. Աբուլֆիզան՝ Բիթլիսից—Մոյաֆարիքին 4 որ. էջ ԳՁ.

համա. սրանց մասին H Topdschian, Die innere Zustände s. 42 ծանոթ 6), 7), 8).

2) Աբուլֆաթ Կար. Արեհացի, գլ. ա. էջ 2 գլ. Ժէ, էջ 24, գլ. Իբ. էջ 29. Guill. de Rubrouk, Récit de son Voyage էջ. 296.

3) Վ. Վրդ. Բաագամյանց, Միխիթար Գոշի Դատաստանագրքեր էջ 109.

4) IV ème partie Chronique de Denys de Tell Mahré, էջ. 104

5) Michel le Syrien, Chronique, L XII, ch XXI, P III, p. 100 trad fr. par Chabot, J. B. Paris 1905.

1067 թվին ավագակները կողմից ստեղծված անապահով զրույթյան մասին նույն պատմիչի մոտ գտնվում են այլ վկայություններ¹⁾

Կիր. Գանձակեցին 1260 թ. Մերտին քաղաքի Հոլավու խանի կողմից զրավման առթիվ հաղորդում է.

«...Առաքեաց (Հոլավու) զօրս իվերայ քաղաքին Մերտինայ, որք հազիւ կարացին առնուլ զնա յետ բազում աւուրց. կոտորեցին և զբազում յեղուղակս փնտխս ազգաց և ճանապարհորդաց, զորս զաճարիս անուանէին՝ թուրք աղզաւ, ամրացեալք ի թաւ մայրիս և ի դժվարին վայրս ամրոցացն, անթիւ բազմութիւնք...»²⁾

Նման վկայությունների շարքը կարելի է յեր յերկարել:

Այս մասին ուշագրավ մի վկայություն է այն խոսակցությունը, վոր ունեցել է 1711 թվին Thesaurus linguae Armeniacae ի հիդինակը Joh. Joachim Schröder-ը Պարսկաստանից Ամստերդամ յեկած մի հայ վաճառականի հետ.

«Ֆ.— Զարմանալի ճանապարհ այն և առավել մեղ վոր չենք տեսել. մա էդ խօսքդ կարավան ինչ լեզու այ, կամ ինչ ասելք.

Հայ վաճառականը պատասխանում է.

«Ս.— Մեզ ալ մեծ զարմանք այ երբոր նաւի հաքաթ կուլսենք. կարվան որ թուրքեն քեարվան կասէ հայոց լեզուա, ասել սաքի, կաթող վաճեկոյ. (ընդգծումը մերն է, Հ. Զ.) որ աշխարհօրէն կասեն. զարշու կենալու կարող»:

«Ֆ.— Մա պարոն Սաֆար ձեր վաճառականքն ինչպէս ճանապարհ կանեն.

«Ս.— Խիստ հեշտ և սաֆայով զարա երբոր շատվոր են, և շատ ապրանք կայ, կարավան կուղառնան, և ունեն իրեն քեարվան բաշին, չավուշն, թֆանքչին ամեն փուսաթովն ապրանքն, ուղտերն, ձի կամ ջորի կուղառնան, և իւրանք ձիաւորք ինչպէս մին մեծ օրտու կուղանան, ու ամէնքն քեարվան բաշու հրամանաւ աստ կամ անդ կիջկանին...»³⁾

Կարավանի սահմանավորումը վորպես «կարող վանելոյ» կամ «զարշու կենալու կարող», ինչպէս նաև քեարվան բաշին, չավուշը, թֆանքչին խոսում են այն անապահով զրույթյան մասին, վոր գոյություն է ունեցել Արեւելքի կարավանի ճանապարհների վրա:

Ճանապարհների այդ անապահովության պատճառով վաճառականը առաջին հերթին պիտի մտածեր փողի ապահով փոխադրության մասին:

Այս մասին ուշագրավ մի վկայություն է Վարդանի առակներում հետեվյալ կտորը.

«Ասի յիմաստնոց, թէ իմաստուն վաճառականք յորժամ երկընչին յավագակաց ի ճանապարհին, ոչ տանին զգանձա իւրեանց ընդ

¹⁾ Ibid p. 162/64,

²⁾ Կիր. Գանձակեցի Գլ. Կ. Էջ 227/28.

³⁾ Joh. Joachim Schröder, Thesaurus linguae Armeniacae Էջ 343/344. Amsterdam 1711.

իւքեամս, այլ տան ի փոխս զգանձա իւրեանց [յ] այնպիսի վաճառական, որ ունին յաշխարհն իւրեանց տուն և գանձ, և առնուն ի նմանէ ձեռագիր և երթայ խախտությամբ և տանի զձեռագիր վաճառականին և առնու զգանձ իւր իտանէ նորա»¹⁾

Այս վկայությունը Wechsel-ի սկզբնական շրջանն է հիշեցնում, վորը 13-րդ դարի կիսուն ձեռնովայում սովորական դարձած էր²⁾

Առևտրական կապիտալի մասին մեր ասածները ամբողջացնելու համար մնում է մի քանի խոսք ասել նաև ոտար առևտրական կապիտալի մասին:

Ամենայն հավանականությամբ արաբները, վորոնք ըստ Իբն Հաուքալի՝ «արաբքին Armenia»-յում գաղութներ ունեյին, մեծ դարկ եյին տալիս ֆեոդ. Հայաստանի ապրանքափոխանակության: Այդ արաբները Հայաստանից դուրս անմիջական կապեր ունենալով, տեղացի աղագրականության առաջնոր հեռանկարներ եյին բաց անում: Նրանց կատարած դերը այս ուղղությունում համար ավելի պարզ կը լինի, յերը նկատի ունենանք վաճառականության զարգացումը խալիֆատի յերկրամասերում:

Ուշագրավ մի ակնարկ է 768 թվի Պարտավի ժողովի ժա կանոնը ֆեոդ. Հայաստանում վոչ քրիստոնյա աղագրականություն գոյություն ունենալու մասին: Այդտեղ ասված է.

«Ժա. Գահանայք պատուէր արացեն արանց և կանանց և դստերաց նոցա, զի չարացեն ընդ հեթանոսի զուղութիւն...»³⁾

Սուրբաղի պատմիչի մոտ ունենք ուշագրավ վկայություն Ամիդ, Արզն և Մայաֆարիքին քաղաքները հաստատված Մուսուլի բնակիչների մասին, վորից յերևում է, վոր նրանք վերին աստիճանի հարուստ են յեմասին, վորից յերևում է, վոր նրանք վերին աստիճանի հարուստ են յեմասին, զի և պարապել վաշխառությամբ⁴⁾ Այս մասին ավելի մանրամասն քիչ հետո: Վերև մենք տեսանք խալիֆ քաղաքում արաբացի առևտրականների մասին Նասիրի խորատու վկայությունից:

Բացի արաբ առևտրականներից հանդիպում ենք այս ժամանակաշրջանում ևս հրեա առևտրականների: Նախկին դարերում արանց Հայաստանում մեծ քանակությամբ լինելուն մասին մեր ամբողջական ուսումնասիրության առաջին մասում մանրամասն հայտնել ենք:

Իբն Սուրբաղի արաբ աշխարհագիրը 879 թվին խոսում է հրեյանե-

¹⁾ Ժողովածու Առակաց Վարդանայ, Մաս II. Պետերբուրգ 1895, Էջ 184.

²⁾ Grasshofe իր «Wechselrecht u/er Araber» (Berlin 1899) աշխատության մեջ ապացուցել է յեվրոպական wechselի Արեւելքից (Արաբիայից) Սպանիա և Իտալիա ներմուծումը: Արաբական ամենահին Wechselը մեղ հասել է 871 թ.-ից առաջ. G. Tasov, Die ältesten Spuren des Wechsels Mit. d. Seminars f. orient. Sprachen Jahrg. XXVIII, 1925 Է. 280/81.

³⁾ Կանոնագիրք հայոց, Էջ 168. Թիֆլիս 1914.

⁴⁾ VI ème Partie chronique de Denys de Tell-Mahré-Էջ. 92.

Ֆեոդ. Հայաստանի հարավում առևտրական այս կենտրոնների մասին Դընիի այս ուշադրով վկայությունը կասկած չի թողնում այն հակադրություն մասին, վոր ստեղծվել էր վաղխառուական կապիտալի միջոցով: Անտարակույս, նման պայմաններում հողը դառնալու էր առուծախսի առարկա: Ստ. Որբելյանի փաստաթղթերում և Վիմական տարեգրի արձանագրություններում կան մի քանիներ, վորոնք կարող են նմուշ ծառայել այն մասին: Առաջ կը բերենք այնպիսիներ, վորոնք վերաբերում են արար հողատերերի կողմից վաճառված սեփականություններին:

873 թ. Սյունյաց Մարիամ իշխանուհիի նվիրատվությունների մեջ ասված է.

«...Եւ գնեալ ի հագարացի մարդկանէ զգեօղն Շողուգայ ընդ 60.000 դրամի աղատ յամենայն աշխարհական հարկաց՝ ընծայէ ի սեպհական ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն. նմանապես և զեօղ մի ի Մաղաղ գաւառի ընդ 3.000 դահեկանի գնէ և տայ ի սուրբ եկեղեցիս որոյ անունն զեղջն Գնէր»: ¹⁾

907 թ. Արամոնսի արձանագրության մեջ կարդում ենք.

«...Ես Գրիգոր, Սիւնեաց տէր, որդի Վասակա, շատածախ գանձիւք գնեցի ի հագարացեաց...ընդ նմին և նորոգեցի դսա...» ²⁾

Յեթե Սյունիքում, վոր իր աշխարհագրական դիրքով ֆեոդ. Հայաստանի անմատչելի գավառներից մին էր, արար հողատերեր գոյություն ունեցել են, վորոնք հողի առևտուրով են զբաղվել, ավելի մեծ չափերով պետք և ընդունել, մեր կարծիքով, այս գրությունը վերաբերում է Հայաստանի դաշտային մասերում:

Դընիի վկայությունը ուշադրության արժանի չէ նաև այն տեսակետից, վոր նա մեղ տալիս և վաղխառուական կապիտալի կեղծքման այն ձևը, վոր գոյություն է ունեցել այդ ժամանակաշրջանում:

Այստեղ հետաքրքիր է ընդդեմ rachat-ի ձևը, վոր ըստ յերևույթին կրկնակի վաշխի մի գրություն են երևալայցնում: Այս կետը ավելի կը պարզվի հաջորդ վկայություններ:

Դընի մեղ թողել է Միջագետքում գործող վաղխառուական կապիտալի մասին մի ընդարձակ նկարագրական, վորը կենդանի գույներով մեր առաջն է գնում 8-րդ դարի 70-ական թվերին քաղաքի և գյուղի փոխաբարերությունները:

«Գյուղացիները (les hommes de campagne), անգութ հարկապահանջությունից ճնշված, քաղաքներն ելին գալիս և նվերներ բերում նրանց, վորոնք վաշխով փող ելին տալիս: Վերջինները նրանց տեսնելով ասում ելին «բարի եկար», և սիրալիր բառերով ավելացնում ելին. «քեզ կտամ ամեն ինչ, յերբ դու կարիք զգաս: Մի մտահոգվիր, վորքան ես ապրելու լինեմ, քեզ կտամ. վ. չ վորքի կարիք չես ունենալ: Բեղանից վկա, յերաշխավորություն, ավանդ չեմ պահանջեր. վնչ տոկոս և վնչ rachat: Կառնես և յերբ հունձքը հավաքես, իմ ինչքըս կը

¹⁾ Ա. Որբելյան, I. գլ. I, էջ 218/19

²⁾ Ա. Կոստանյան Վիմական տարեգիր էջ 6,

բերես կամ ինձ ցորեն կամ գինի կըտաս այդ ժամանակամիջոցում: Դնս այժմ և վերադարձիր մի քանի որից հետո»:

«...Գյուղացին հանգիստ մնում էր իր տանը մինչև հարկապահանջների գալը: Յերբ վերջինները նրան հանկարծակի ելին բերում ասում էր նրանց. «սպասեցեք մի քիչ, կը բերեմ շուտով». և աճապարանքով գնում էր այն մարդու մոտ, վոր հույս էր տվել իրան: «Տեր, ասում էր նրան, բարեհաճիր տալ ինձ այն՝ ինչ վոր քեզանից խնդրում եմ, վորպեսզի ինձ խարազանով չծեծեն»:

Որեր ձգձգումներից հետո, յերբ գյուղացին մահվան տառապանք է ապրում, վերջապես համաձայնում է «տերը» տալ խնդրվածը և գյուղացուց պահանջում է մի գրություն: Յերբ գրությունը պատրաստ է՝ կրկին ձեզ ձգում:

«...Յեվ յերբ գյուղացիները առտու կանուխ գալիս ելին, ասում է. «Ձեմ տար, յեթե մի ավանդ չտաս»: Ավանդը ստանալուց հետո հարց էր տալիս. «վորքան տոկոս պիտի տաս այս դրամի համար. և վորքան ցորեն rachat-ի համար: Վորովհետև ցորենը իր ընթացիկ գինով չեմ ընդուներ»:

«Նեղը ընկած լինելուն պատճառով համաձայնում ելին ինչ վոր նրա բերանը պահանջում էր»: ¹⁾

Յերբ գյուղացին մի կերպ փոխ վերցրած գումարը ճարում է և բերում պարտքը վճարելու, վաղխառուն ստանալը ձգձգում է և աշխատում է գյուղացին պարտական թողուլ:

Դընիի այս ուշադրով վկայության մեջ ուշադրության արժանի է կետը այն է, թե ինչ հանգամանքներում գյուղացին ստիպված է լինում վաղխառուի վոտը իյնալու:

Այստեղ պարզ ասված է այդ մասին. հարկապահանջների խարազանն է այդ:

Յեթե սուրիացի պատմիչ Դընիի փոխարինենք Ղևոնդ յերիցով, այն ժամանակ նույն սահմաններում գտնվող հայ գյուղացիությունը պատկերը և կը պարզվի մեր առջև: Միայն խոսք կարող է լինել հարաբերական տարբերություն մասին: Արարների ֆեոդալական Հայաստանում վարած հարկաչին քաղաքականության մասին մեր կատարած ուսումնասիրությունը ²⁾ յին քաղաքականության մասին մեր կատարած ուսումնասիրությունը, վորոնց տվեց արտադրող դասի այն սոսկալի զվարությունները, վորոնց առջև կանգնած էր ան, հարկերը դրամով վճարելու ստիպված լինելու պատճառով:

Արտաքին իշխողներին վճարելիք տրիպոլտների համար մանր արտադրող դասը վորոշ ժամանակներում առեկանելի կացություն էր մաշնվում: Սրա վրա ավելանում ելին նաև ներքին ֆեոդալներին վճարվելիք հարկերը, վորոնք, մեր կարծիքով, հողատիրության կենտրոնացման և ապրանքափոխանակության այս շրջանում ավելի ծանրանում ելին:

Այն տնտեսական պայմանները, վորոնք գոյություն ունեցել են Մի-

¹⁾ IV ieme partie chronique de Denys de Tell-Mahre էջ 151/153

²⁾ Տես ՀՄՊՁ Պետ. Համալսարանի Գիտական Տեղեկագիր № 2, Յերեան 1927 թ.

Ջաղերտը ունի արաբական տիրապետութեան շրջանում, գոյութիւն ունեւորելու ժամանակաշրջանում ֆեոդ. Հայաստանում: Ուստի, ամենայն հավանականութեամբ, յերկու յերկրներում առաջացած յերկու լիւնները առավել կամ նվազ չափով նույնը պիտի լինէին: Ինչպէս ասացինք, խոսք կարող է լինել հարաբերական տարբերութեան մասին. հիմքում զբաղեցնող միևնույն էր:

Այժմ քննենք Արիստ. Լաստիվերտացիի այն վկայութիւնները, վորոնք վերաբերում են ֆեոդ. Հայաստանի յերկու հայտնի քաղաքներին՝ Արծնին և Անիին:

11-րդ դարի կիսուն նրա ներկայացրած այս յերկու քաղաքները հասել էին զարգացման մի շրջանի, վորտեղ քաղաքի և գյուղի միջև ստեղծված փոխհարաբերութեան շրջանը ավելի բոլորեցացած ձևով արտահայտվել են: Քաղաքի կողմից գյուղը շահագործելու, կեղեքելու պատմական, որինաչափական այդ արտահայտութիւնը պատմիչը իր դարի կրօնաբարոյախոսական աշխարհայացքով մեր առջևն է դնում:

Անցյալը հիշելով, յերբ դեռևս առևտրական-վաշխառուական կապիտալը գտնվում էր իր զարգացման սկզբնական շրջանում, վաճառականները, ասում է պատմիչը 1049 թ. Արծն քաղաքի մասին.

«...եկեղեցւոյ շինողք և զարգարողք... ոչ գոյթ խաբէութիւն ի վաճառսն, և ոչ նենգութիւն ի տուրև-առիկ փոփոխմունս: Ընդ բամբասանօք էր վաշխից և տոկոսեացն շահքն. .»¹⁾

Բամբաստվում էր վաշխի և տոկոսի բերած շահը. հիշենք V դարի Հովհ. Մանգակունիի ճառը.

«Եւ այնչափ անօրէն են ախտ փոխոց տոկոսեաց, մինչև յամուլ արգանդէ խնդրէ որդի բոնութեամբ, և յապառաժ քարանց պտուղ որոնէ, և առանց սերման կամի արգիւնս ժողովել, և յարուաց փնունդըս պահանջել, և քարէ կաթն կթել, և ի վիմաց ասը ոտանալ...»²⁾ Հակառակ նրան, վոր վաշխի շահը բամբաստվում էր, սակայն, սա դեռ չի նշանակում, վոր նա իր ավերները չէր գործում. այսպէս, կարող էր ենք նույն ճառի շարունակութեան մեջ.

«...եւ պատուհասեալք պատժին չարապէս խնդրողք վաշխիցն և փողոցն՝ որ ընդդէմ պատուիրանացն Աստուծոյ չարեացս իւրեանց ի վաշխու տան, և տոկոսիօք անդէն պահանջեն, և անակնաձեւի ուսն զմարմինս տնանկաց, և ըմպեն զարիւն նորա անողորմ:

«Երբեմն սուղ ինչ պախրէն կսմի վաճառել...և երբեմն խորհի գաղտագնաց լինել ի տար աշխարհ...»

«Եւ եթէ աղքատ ևս իցէ փողապարտն, ի ծուփս և ի հոգս մաշի հանապազ. անքուն և դառնաքուն ի գիշերի ննջիւն նորա. տխուր և տրտում և մտայոյզ ի տուրնջեան շրջի, և ոչ գիտէ յո երթայ»:³⁾

1) Արիստ. Լաստիվերտացիի Գլ. ԺԲ. էջ 53

2) Հովհ. Մանգակունիի Ե. էջ 63. վերնախմբի 1860

3) Հովհ. Մանգակունիի ճառք: էջ 63-64. վորքան նամանութիւն Սոլոնի հայտնի յերգի հետ.

«...Während so der Unheil stetig wüthet in der Bürger kreis. Wandern die verarmten Leute ins Elend Scharenweis. Als verkaufte Schuldenknechte bindet sie der Ketten schmach. Und so tragen der Fronde bitteren Zwang u. Ungemach».

Stowasser, „Griechenlyrik“, Heidelberg O. J. s. 6, bei K. Wittvogel, Geschichte d. Bürgerlichen Gesellschaf, 5. 208

նույնը չի հիշեցնում արդյոք յերբ Կորյունի մոտ կարդում ենք.

«...Եւ բազում մուրհակս անիրաւութեան պատառեաց»:¹⁾

Այսպէս յերբ վաշխի շահը բամբաստվում էր:

Փոխվել էին ժամանակները. տնտեսական կյանքը ընթացել էր պատմական անհրաժեշտութեամբ. արտադրական ուժերի զարգացումով պայմանավորված արտադրական փոխ-հարաբերութեան շրջանները տնտեսական կատեգորիաների մասին նոր հայեցողութիւն և ըմբռնում էր առաջացրել.

«Վաշխից և տոկոսեաց օրէնք եղան», շարունակում է Լաստիվերտացին, «և ցորենոյ բազմապատկութիւն, որով երկիր պղծի և արգելու զարգանդ առ ի տալոյ զպտուղս ի ժամու իւրում առ ի կերակուր մարդկան»:²⁾

Առևտրական վաշխառուական կապիտալը կարողանում է որինականացնել «ընդ բամբասանօք» յեղով վաշխի ու տոկոսի շահը: Յեւ սրան է վերագրում պատմիչը, կրօնական գունավորումով, յերկրի արգանդի պղծումը և նրա անբերութիւնը: Այստեղ պատմիչը վեր է հանում այն քայքայիչ դերը, վոր կատարում է վաշխառուական կապիտալը գյուղական մանր տնտեսութեան նկատմամբ:

«Բավական է միայն», ասում է Մարքս, «վոր մանր գյուղացու մի կովը սատկի, այն ժամանակ նա անկարող կը լինի նախկին աստիճանով վերարտադրութեան սկսելու: Այդ կերպ նա կընկնի վաշխառուի ձեռքը, և միանգամ վոր ընկավ, նա յերբեք չազատվի»:³⁾

Յեւ կամ մի յերաշտ տարի կամ բնութեան այլ աղետ, վորոնք այնքան հաճախաբար են յեղել ջրասակավ այս յերկրամասում, մանր արտադրողը կարիքի մեջ գցի և նա ստիպվի դիմել վաշխառուին, այլևս շատ դժվար կլինի նրա ճիրաններից ազատվել և ահա «երկիր պղծի և արգելու զարգանդ առ ի տալու զպտուղս ի ժամու իւրում»:

«Բայց յորմէ հետէ մտին յեկեղեցիս մեր Սեքարայիք և Պիհոնացիք, և արգարութեան օրէնքն յանիրաւութիւն դարձաւ, և յարգի եղև արծաթասիրութիւն քան զաստուածասիրութիւն, և մամոնայն քան զՔրիստոս... իշխանք սորա զողակիցք եղեն զօղոց, վրիժազորք և արծաթոյ ծառայք...»⁴⁾

Ուշագրավ յերևութեւն է, վոր պատմիչը կապում է առևտրական-վաշխառուական կապիտալի ուժեղացումը աղանդավորական շարժման հետ:

Ունի էլ շագագործում և կողոպտում. պատմիչը տալիս է այս հարցին պատասխան:

«Ձուռնս տնակից՝ (տնանկից) աղքատացն, և զսահմանս անգաստանաց նոցա յափշտակէին մեծատունքն...»⁵⁾

1) Կորյուն, Պատմութիւն վարուց և մահվան սրբույն Մեծնոպա վարդապետի էջ 36 վերնախմբի 1894.

2) Արիստ. Լաստիվերտացիի Գլ. ԺԲ. էջ 54

3) K. Marx das kapital III, kap. 16, S. 138.

4) Արիստ. Լաստիվերտացիի Գլ. ԺԲ. էջ 54

5) Ibid Գլ. ԺԲ. էջ 54

Ինչու իշխանները դառնում են «գողակիցք գողոց» և մեծատունները յափշտակիչներ:

«Ամբարտաւանութիւն» անվանում է պերճանքի հավելումը, Վորը անմիջական հետեանքն է առեւտրական կապիտալի զարգացման և ֆեոդ. հայաստանի Արեւելքի-Արեւմուտքի ապրանքափոխանակության ցանցին մեջ ընկնելուն:

«Այդ՝ ամենեցուն չար և ախտա այս (պերճանքի հալեկման մասին և խոսքը), բայց կարի տուաւել կանանց ազգի»։ ապա թվում և նրանց զարդերը. «... զգինդսն և զմատանիսն, զապարանջանսն, զքօղէսն և զմեհնանդսն և զայլ ամենայն»։¹⁾

Ահա թե ինչու ստեղծված այս նորանոր և բազմազան պերճանքի պահանջների պատճառով անաշխատ հասույթով ապրողները դառնում են «գողակից գողոց» և մեծատունները հափշտակիչներ. որին ակացնում են վաշխն ու տոկոսը, լինում ե «ցորենոյ բազմապատկութիւն»։ Յեւ այս դրությունը ուղղակի քայքայում ե գյուղացիական տնտեսությունները, արգելք լինելով արտադրական ուժերի զարգացման. միաժամանակ հավերժացնելով այս թշվառ պայմանները. վորտեղ աշխատանքի հասարակական արտադրողականությունը աշխատանքի իսկ հաշվույն չի զարգանում, ինչպես առհասարակ տեսնում ենք կապիտալիստական արտադրության մեջ։²⁾

Թե ի՞նչ չափերի հասել եր մանր գյուղացիության շահագործումը և քաղաքներում հարստության կուտակումը, այս մասին կարգում ենք հետեւյալը Մատթ. Ուռահեցու մոտ Դավթուկ անուն մի քորիպիսկոպոսի մասին: Նախ ընդհանուր առմամբ քաղաքի հարստության մասին ասելուց հետո. «այլ զոսկւոյ և զարծաթոյ և զդիպակաց ավելորդ է ասել» շարունակում է,

«...Բայց զայս բազում անգամ լուեալ է մեր ի բազմաց յաղագս քորեպիսկոպոսին որ ասէին Դաւթուկ, եթէ զգանձատուննորա, Աբրիհիմն էառ և քառասուն ուղտ բարձան զգանձարանն նորա ութհարիւր վեցկի եզանց ելանէին ի տանէ նորա»։³

Յեթե մենք բառացի չընդունենք պատմիչի մեզ հաղորդած այս վկայու-
թյունը, այնուամենայնիվ կարելի յե հաստատասել, վոր հարստության կու-
տակումը քաղաքում ստացել եր բավականին խոշոր համեմատություն:

Յեկ զարմանալու չե, յերբ Լաստիվերոացին այնքան ծանր խոսքեր
և գործածում իշխանական այն դժգոհներին և ապարանքների մասին, վորոնք
կառուցվել են «վաշիլի» փողերով:

կառուցվել են «վաշխր» գողակով:
Խոսքը վերաբերում է 1064 թ. Սելջուկ-թուրքերի կողմից Անիի
գրավման.

¹⁾ Ibid 94. ϕ_F . 42 55.

2) K. Marx, das Kapital III₂, kap. 36 135.

3) Մասք. Ուռաեցի, էջ 103 հմտ. նաև Սմբատ Գուհասապ, Տարեգիրք: էջ 66. Փարիզ 1856. Ղ. Ալիօան Հայապատում էջ 324. ծանոթ. 6.

«Այլ և ի ճարպոյ անիրաւութեան ի նմա գործելոցն տոչորեցաւ քարձրաշէն և զեղեցկայարմար ապարանքն, եղև և ամենայն բնակութիւնն իբրև հողաբլուր, և վաշխն ու նենգութիւնն որ ի նմա խափանեցաւ»:¹⁾

Բաղաձիւնքի և գլուղի մեջն ստեղծված այս սուր հակադրութեան առջև, պատմութիւնը ապարանքի կործանման առթիւ, կարծես ցաւով խառն ուրախութեամբ կ'ընդունէ և հայտնում: Այդ ուրախութեամբը բոլորովն է նրանից, Վոյ քաղաքի հին նահապետական կենցաղը վտար տակ եր տալիս և ստեղծվել եր ցոյս ու շվայտ կյանք: Հին բարքերի պաշտպան պատմութիւնը այսպէս և բացատրում այդ շվայտութեան և պերճանքի առաջ գալը:

«Այս և բաժին անիրաւ քաղաքաց, որ շինեն զինքեանս արեամբ
օտարաց, և ՚ի քրտանց տնանկաց փարթամանսն, և ՚ի վաշխից և
յանիրաւութեանց զտունս իւրանց ամրացուցանեն. և ինքեանք զմի-
տլս իւրեանց անողորմ ունելով առ աղքատս և տնանկս՝ միայն հեշ-
տութեան և փափկութեան սպասեն, և ՚ի գործոց աղտեղութեան ոչ
խորշին, այլ միայն արբեալ լինեն ի ցանկութեանցն որ զնոսա ըմ-
բոնեալ ունի»։²⁾

Ինչ յեզրակացութիւններ կարող ենք հանել արարական տիրապետութեան շրջանում փեռով. Հայաստանի քաղաքի և գյուղի մասին կատարած մեր այս ուսումնասիրութեան ից. գեղ. Հայաստանի տնտեսական

1. Արարներն տիրապետությամբ ֆեոդ. Հայաստանի տնտեսական
կյանքում յերկու հիմնական մղիչ ուժեր հանդես են գալիս.
Ստատիստիկ տրամադական հարկերի դանձումը.

ա) Արարների զրամական հարկերի զանգույնը.
բ) Տեղացի փոքրածիվ ֆեոդալների ձեռքում հողամասերի կենտրոնացում:

2. Այս յերկու ուժերի հիմնական տնդրադարձումը հերքին տնտեսական կյանքում լինում եր այն, վոր հասարակական աշխատանքում բաժանված լինում է իրար հանդիմանական ժամանակի ընթացքում խորանում:

3. Բացի այս, յերկրորդ հիմնական անդադադարձումը լինում էր այն, որ հայ ազգային ինքնիշխանությունը չէր կարողանում համեմատաբար զարգանալ և զարգանալով չէր կարողանում իրեն համեմատաբար պահպանել:

Վրո արտադրող շանի կեղեքումը ավելի ստանդարտ դառնալու է:
 Կատարում տեղացի ֆեոդալների կողմից: Առաջին հակադրութուն:
 Կատարում տեղացի ֆեոդալների կողմից: Առաջին հակադրութուն:

4. Մի կողմից հասարակական աշխատանքում առաջացած բնօրինակ մեղք, ֆեոդ. Հայաստանի Արևելքի և Արևմուտքի ապրանքափոխանակության մեղքանքի մեղք ընկնելը, մյուս կողմից անաշխատ սպառողների ավելի մեծ թվով քաղաքներում բնակություն հաստատելը, ինչպես նաև այլ ազդակ-ներ, առաջանում էին ֆեոդ. Հայաստանի քաղաքների բարգավաճումը և նրանց ծնունդ տալիս նոր քաղաքների:

5. Մասնավորաբար, արհեստավորական-առևարական քաղաքներում՝ առևտրական կապիտալի աշխուժացումով առաջանում էր քաղաքի ազգաբնակչության վերոշ շերտում հարստություն կուտակում:

1) Արիստ, Լասթիկեացի, ԳԼ. ԻԴ. Էջ 111

2) Ibid 9^l. 1⁷. 62 111.

6. Արաբացիների գանձած զրամական հարկերը և տեղացի իշխանների կեղեքումների սաստկացումը, մանր արտադրող դասը վաշխառուական կապիտալի ձեռքն եր գցում:

7. Ժամանակի ընթացքում քաղաքի ազգաբնակչության վերին խավերում այնքան վորքան հարստությունը կուտակվում եր, նույն չափով գյուղը աղքատանում և քայքայվում: Յերկրորդ հիմնական հակադրություն:

Ահա այն յերկու հիմնական հակադրությունները, վորոնք կարողանում ենք մատնանիշ անել ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև արաբական շրջանում:



ՀՀ Ազգային գրադարան



NI 0418469

